

ՀՈՒՅՄ

ՅՅ ի օ՞՞՞՞ ՄՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ ՅՅՅՅ

لويس

LOUYS
Armenian Monthly

ISSN 1682-5446



Այս համարում

Հայերեն բաժին

1- Լրագրողների 6-րդ համագումար.....	1
2- Հայաստան.....	4
3- Արեւմտյան Հայաստան.....	7
4- Միջազգային.....	9
5- Մշակույթ	13
6- Խոհեր.....	17
7- Գծանկարչություն.....	18
8- Հայերեն-պարսկերեն առաձանի.....	18

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-2
----------------	-----



Շաբաթի առաջին էջում՝ ՀՀ Սփյուռքի նախարարություն-ՀՀԴ.

Վերջին էջում՝ Աղթամար՝ խաչքար



Համար 173, նոյեմբեր 2012 թ.

No. 173, November 2012

ماهنامه لویس - شماره ۱۷۳ آذر ماه ۱۳۹۱

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

ö áëì ñ ò 15875-9488 Â»Ññ³ Ý - Æñ³ Ý

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Լրագրողների 6-րդ համագումարը

Սույն թվականի հոկտեմբերի 4-6-ին Երեւանում տեղի ունեցավ հայ լրագրության 6-րդ համագումարը, որը ունեցավ միայն բացասական հետեւանք , հատկապես զուտ հայրենասեր դեմքերի համար: Այստեղ հարկ ենք համարում մատնանշել մի քանի հարց, թեւեւ պիտի ափսոսել ժամանակն ու այս էջերի վատնումը այդպիսի խայտառակ ձեռնարկի եւ նրա կատաղների առնչությամբ.

Հարկ ենք համարում մեր խոսքը ուղղել Սփյուռքը բաժանող նախարարության դեկավարին.

1-Համագումարը կազմակերպվել էր 47 անձերից բաղկացած «համակարգող մարմնի» կողմից, որին ավելի լավ է պիտակել «Անգիտաց մարմին»:

2-Այդ մարմինը չգիտես ինչպե՞ս էր ընտրվել, ո՞վ է ընտրել:

3-Այդ անգործունյա եւ անդամալույծ մարմինը չէր հասցրել նախկին համագումարից մինչեւ այս մեկը, ամբողջ երկու տարվա ընթացքում մի հաղորդագրություն ուղարկել համագումարի մասնակիցներին, հայտնելով համագումարի ճշգրիտ տեղը եւ հասցեն, որի պատճառով հրավիրյալները 1-2 ժամ ուշացունով էին տեղ հասել, որոշներն էլ տեղ չէին հասել:

4-Խտրականության հոգին սավառնում էր ծրագրի ամբողջ ընթացքում, նրանք որ իրենցից էին, կամ նրանց «աչքի լույսը» դիմավորվել էին օղանավակայանում, իսկ անտերունց մնացած մասնակիցները մնացել էին միայն իրենց իսկ հույսին:

5- Ծրագրի սկզբից մինչեւ վերջը որակավորվում է որպես ձեւական կատակերգություն, աշխատանք էր կատարվում մասնակիցները առիթ չունենային շփվել ժողովրդին: Այդ իսկ պատճառով էլ անմիջապես ծրագրի բացումից եւ կառավարության ու խորհրդարանի ձեւական եւ թատերական այցից հետո , մասնակիցներին փոխարդեցին քաղաքից հեռու Աղավնաձոր, որտեղ չէին հասցրել, գուցե եւ այդքան քաղաքավարիություն չունեին գուգարանում անձեռոցիկ դնեին եւ կեղտոտ ամանի ջրի մեջ լողացով փափկած մի կտոր օճառի փոխարեն , հեղուկ օճառ եւ հակամեխիչ հեղուկ դնեին: Մասնակիցները երբ սկսեցին խեղդվել այդ հեղձացուցիչ մտնուրտում, որտեղ շուրջ 80 հոգու լցրել էին փոքրիկ մի սենյակ-սրահում, լավ էր հասցրեցին մի քանի շիշ ջուր հասցնել:

6-Տիկին Հրանուշ Հակոբյանը մեզ սփյուռքահայերիս լավագույն կերպով ծանոթացրեց ստալինյան բռնապետական մթնոլորտը, քանի որ թույլ չէր տալիս մարդիկ ազատորեն իրենց խոսքը ասեին, տողերիս գրողին էլ արբեցող համարեց, որը ցանկանում էր ճշմարտություններ բացահայտեր, դա իսկապես նողկալի էր եւ անոթալի նախարարի մակարդակի համար:

7-Այդ տիկինը շրջապատված էր «կուսակցականներով», մի կողմը տխրառեչակ Շահան Գանդահարյանը (վերոհիշյալ մարմնի ինքնակոչ նախագահ) , իսկ մյուս կողմը հայ «դատի խանութպան» Հարութ Սասունյանը:

6-Վերջում, մրցանակների մեծամասնությունը տրվեց դաշնակցականներին, մի քանիսն էլ ռամկավարներին ու բարեգործականներին, ամենայն անարդարությամբ:

7-Տիկին Հրանուշ շատ ենք ցավում, որ ձեր շուրջ եք հավաքել անգործունյա մի անձնակազմ, որը անկասկած գուրկ է տեսողության ուժից, եւ որ չգիտի ով է իսկական հայրենասերը եւ ով ազգային առեւտրականն ու շողոքորթը:

8-Տիկին, այդ գունարները «հարամ» են, մեր անմեղ ժողովրդի արմազինն են...1988 թվականի երկրաշարժի առիթով ժողովրդից հավաքված ու այլ առիթներով կորզած դրամներն են, որոնք երբեք չեն ծառայել իրենց իսկական նպատակին:

9-Ձեզ հրավիրում ենք օրվա մի քանի ռոպեն հատկացնել Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությանը եւ հայ ազգասեր մանուկի ընթացմամբ:

Խմբագիր

«Չայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» լրագրողների համահայկական 6-րդ համաժողով



ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ 2012թ. հոկտեմբերի 4-6-ը Երևանում և Աղավնաձորում կայացավ «Չայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» լրագրողների համահայկական 6-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցեցին Չայաստանի և Սփյուռքի լրատվամիջոցների ղեկավարներ և ներկայացուցիչներ՝ 107 լրագրող աշխարհի 22 երկրից:

Հոկտեմբերի 4-ին Երևանի պետական համալսարանի Եղիշե Չարենցի անվան դահլիճում մեկնարկեց «Չայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» լրագրողների համահայկական 6-րդ համաժողովը:

Բացման խոսքում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ողջունեց համաժողովի մասնակիցներին և կարևորեց յուրաքանչյուրի ներդրումն ու մասնակցությունը համաժողովում՝ հորդորելով ավելի տեսանելի և լսելի դարձնել հայկական խնդիրները ամբողջ աշխարհում: Հայաստանի և Սփյուռքի լրագրողների ուշադրությունը հրավիրելով հիմնական 3 ուղղությունների վրա՝ նախարարը նշեց. «Չայոց ցեղասպանությունը այսօր ճանաչել են առաջադեմ երկրները: Սակայն չկա մի երկիր, որը չի հավատում, որ 1915 թվականին ցեղասպանություն է եղել: Այլ խնդիր է, թե որոշակի նպատակահարմարություններից ելնելով՝ պաշտոնապես երբ կճանաչեն այն: Մեր խնդիրն է համայն աշխարհին հավատացնել, որ դա ցեղասպանություն էր ոչ միայն հայերի նկատմամբ, այլև ոճիր՝ ուղղված համայն մարդկությանը: Այսօր Թուրքիան երկփեղկվել է. Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստերն ու եղելություններն այնքան ակնհայտ են, որ առաջադեմ մտավորականները, գիտնականներն ու գործիչները համակարծիք են, թե պետք է մաքրել պատմության փոշին, ասել ճշմարտությունը: Այս մարդիկ և նրանց գործունեությունը ևս, պետք է մեր ուշադրության կենտրոնում լինեն: Մենք այսօր խոսում ենք 1,5 միլիոն անմեղ զոհերի մասին, սակայն պետք է այս իրողությունը գումարենք նաև այն սոցիալական ու հոգեբանական խնդիրները, որի առջև՝ երևույթի չդատապարված և չհատուցված լինելու պատճառով, կանգնում են ցեղասպանություն ապրած մարդն ու իր սերունդները: Թուրքերը հույս ունեն, որ ժամանակը կմոռացնի ամեն բան, սակայն մենք պիտի միավորվենք: Ցեղասպանություն վերապրողների 3-րդ և 4-րդ սերունդներն առավել պահանջատեր պիտի լինեն»:

Ընթերցվեցին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Բակո

Սահակյանի ուղերձները, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Չայոց Կաթողիկոսի, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսի և Տեր Ներսես Պետրոս ԺԹ կաթողիկոսի օրհնության խոսքերը: Բացման հանդիսավոր արարողությունից հետո համաժողովի մասնակիցները այցելեցին ՀՀ կառավարություն՝ լուսաբանող լրատվամիջոցների ներկայացուցիչների համար հատկացված դահլիճից հետևելու ՀՀ կառավարության նիստին:

Մասնակիցներն այցելեցին Չայոց ցեղասպանության հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Այնուհետև լրագրողները մեկնեցին Աղավնաձոր, որտեղ կայացավ համաժողովի առաջին նիստը՝ «Չայոց ցեղասպանության հիմնախնդիրը» թեմայով:

Երեկոյան ներկաները մասնակցեցին Լ.Ավետիսյանի «Ուրբաթագիրք», Ֆ.Աֆրիկյանի «Այբ Բեն Գիմ» և Մ.Աթայանի «Հայ տպագրական խոսքը Ուկրաինայում» գրքերի շնորհանդեսին:

Դիտեցին ՀՀ անկախության 20 ամյակին նվիրված ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ նկարահանված «Իմ Հայաստան» ֆիլմը:

Հոկտեմբերի 5-ին Աղավնաձորում կայացավ համաժողովի «Չայոց ցեղասպանությունն ու հայ լրագրությունը», «Հեռուստատեսությունն ու ռադիոն Չայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում» և «Չայոց ցեղասպանության հիմնախնդիր արժարժումը միջազգային մամուլում» թեմաներով նիստերը:

Համաժողովի 2-րդ օրը ներկայացվեցին թուրքական մամուլի հակահայկական պրոպագանդայի դիմագրավման առնչվող հարցեր: Քննարկվեցին այն մարտահրավերները, որոնք սպառնում են Հայկական հարցին, Չայոց ցեղասպանությանը վերաբերող տեղեկատվությունը միջազգային հանրությանը ներկայացնելու գործին:

Կարծիքներ հնչեցին, որ արդիական խնդիր է զուտ տեղեկատվական բնույթի հոդվածները վերլուծական հավաստի փաստերով հագեցած կյուբերով փոխարինելը: Անհրաժեշտություն կա օգտագործել հեղինակավոր գիտնականների ուսումնասիրությունները, տեսակետները, արդեն իսկ հայտնի փաստերը:

Կարևորվեց նաև համացանցի հնարավորությունները ճիշտ օգտագործելու հարցը: Ներկայացվեցին մեթոդներ, որոնք հատկապես Չայոց ցեղասպանությանը, ինչպես նաև Հայաստանի մասին տեղեկատվությունն ու հոդվածները առավել մատչելի կդարձնեն որոնողական համակարգերում՝ հասանելի դառնալով առավել լայն հանրությանը:

Համաժողովի մասնակիցները Ցեղասպանությանը վերաբերող տեղեկատվության հասանելիությունը և տարածման հնարավորությունները դիտարկեցին տարբեր երկրների օրինակներով՝ հաշվի առնելով տարբեր երկրների մշակութային և հասարակական առանձնահատկությունները: Կարևորվեց նաև տարբեր երկրների հայ համայնքների դերն ու աջակցությունը:

Համաժողովի մասնակիցները, որպես գործնական քայլեր, որոշեցին առավել ինտենսիվ ու նպատակաուղղված դարձնել Հայոց Հարցին վերաբերող հրապարակումները, անդրադառնալ պատմական իրողություններին, ինչպես նաև Ցեղասպանությունն ապրած մարդկանց սերունդների պատմությանը, այն բոլոր պատմական ու քաղաքական իրողություններին, մշակութային, սոցիալական ու հոգեբանական խնդիրներին, որոնք Ցեղասպանության հետևանքն էին և թողեցին իրենց հետքը համաշխարհային պատմության մեջ:

Մասնակիցները միակարծիք էին, որ անհրաժեշտություն կա ճիշտ օգտագործել աշխարհասփյուռ հայ լրագրողական մտքի ներուժը՝ լավագույնս ներկայացնելու 20-րդ դարի առաջին Ցեղասպանության ճանաչման և դատապարտման հիմնահարցը:

Երեկոյան Լրագրողների համահայկական 6-րդ համաժողովի մասնակիցները հանդիպեցին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ:

«Նման հավաքները մենք պետք է խրախուսենք և այս գեղեցիկ ավանդույթը պետք է անպայման շարունակվի: Պատահական չեն ասում ով կառավարում է վիրտուալ աշխարհը, կառավարում է իրական աշխարհը: Ինչը փաստում է, որ լրագրողները գտնվում են «պատերազմի» առաջին ճակատում: Նրանք ովքեր կկարողանան մարդկանց ուղղորդել իրենց գաղափարներով, իրենց հողվածներով, մեկնաբանություններով, նրանք էլ կկարողանան ուղղորդել և կառավարել ժամանակակից աշխարհը:

Տեղեկատվական դաշտում պայթարը տարեցտարի ավելի սուր է դառնում, և պարտավոր ենք ձեզ հետ միասին ազգային կարևոր խնդիրները վեր հանել և համախմբված հանդես գալ, բանի որ մեր հակառակորդը, թշնամին բավականին մեծ գումարներ է ծախսում տեղեկատվական դաշտում, տեղեկատվական պատերազմում հաղթելու համար: Օգտագործում է բոլոր միջոցները, այդ թվում նաև՝ անթույլատրելի: Միասին պարտավոր ենք մեր խոսքը և մեր ճշմարտությունը հասցնել բոլորին: Այս տեսակետից, ուզում եմ ասել, որ դուք իրականում չափազանց պատասխանատու ճակատում եք աշխատում: Ձեր արհեստավարժությունից, ձեր օպերատիվ աշխատանքից շատ բան է կախված: Դուք տեղեկատվություն տալիս եք ոչ միայն աշխարհին, այլ նաև՝ մեզ: Ձեր վերլուծություններով, քննադատությամբ բացահայտում եք այն խնդիրները, որոնք առկա են և ցույց եք տալիս այն ուղիները, որով մենք պետք է գնանք առաջ», - նշեց ՀՀ վարչապետը:

Հանրապետության վարչապետը զրուցեց ներկաների հետ, պատասխանեց նրանց հարցերին: Շուրջ 2 ժամ տևած հանդիպման ընթացքում քննարկվեցին այն հիմնական ռազմավարական սկզբունքները, որոնք պետք է առաջնահերթ լինեն յուրաքանչյուր հայ լրատվամիջոցի գործելակերպում՝ դառնալով Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրությանը հավաստիորեն ներկայացնելու կարևոր գործոն:

Սփյուռքից ժամանած հյուրերը հանրապետության վարչապետին դիմեցին նաև հայաստանյան

ներքաղաքական և հասարակական կյանքին վերաբերող իրենց հուզող հարցերով:

Հանդիպման ավարտին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և ՀՀ սփյուռքի նախարար Յուրայի Յուրայանը հանձնեցին ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի համատեղ «Հայասպանության գործում նշանակալի ավանդի համար» համահայկական մրցանակաբաշխության «Հայկական լրատվամիջոց» անվանակարգի մրցույթի մրցանակները:

Հոկտեմբերի 6-ին կայացավ համաժողովի վերջին հիվանդորդ նիստը «Հակահայկական քարոզչությունը և հայկական ՉԼՄ-ի դերը քարոզչական պատերազմում, արդի տեխնիկական հնարավորությունները՝ համացանց, սոցիալական ցանցեր» թեման:

Այնուհետև համաժողովի մասնակիցները ընդունեցին Լրագրողների համահայկական 6-րդ համաժողովի հայտարարությունը:

Նույն օրը համաժողովի մասնակիցները Աղավնաձորից վերադարձան Երևան և այցելեցին ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ողջունելով ներկաներին, բարձր գնահատեց սփյուռքահայ լրագրողների ավանդը Հայոց ցեղասպանության ճանաչման կարևորագույն գործում: «Ես հետևել եմ համաժողովի աշխատանքներին և գտնում եմ, որ այն չափազանց կարևոր գործունեություն է իրականացնում: Ցեղասպանության ճանաչումը մեր ժողովրդի և հանրապետության ղեկավարության առաջնային խնդիրներից է: Այն ոչ միայն անհրաժեշտ է լոկ մեր ժողովրդին, այլև համայն հանրությանը՝ այսօր և հետագայում՝ նմանաբանությամբ ոճրագործություններից խուսափելու համար», - նշեց Սեյրան Օհանյանը:

Այնուհետև ՀՀ պաշտպանության նախարարը պատասխանեց տարբեր երկրներից ժամանած սփյուռքահայ լրագրողների հարցերին: Լրագրողների հետաքրքրության ու սրտացավության շրջանակը լայն էր: Նրանց հուզում էր հայկական զինված ուժերում հոգևորականների ծառայությանը, Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի շփման գծում ադրբեջանական դիպլոմատիայի առկայությունն ու դրանց գործողություններին, բանակի մարտունակությանն ու սպառազինմանն առնչվող հարցեր:

Հանդիպման ավարտին պաշտպանության նախարարը գերատեսչական մեդալների և պատվոգրերի արժանացրեց սփյուռքյան և հայաստանյան մի շարք լրատվամիջոցների ղեկավարներին:

Հաջորդիվ համաժողովի մասնակիցներն այցելեցին ՀՀ ազգային ժողով՝ ծանոթանալու Հայաստանի օրենսդիր մարմնի աշխատանքային առօրյային և գործունեությանը: Սփյուռքահայ լրագրողներին ողջունեցին ՀՀ ԱԺ պատգամավորները, իսկ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը, կարևորելով սփյուռքյան մամուլի դերը Սփյուռքում դաստիարակվող մարդու աշխարհայացքի ձևավորման գործում, նշեց. «Բազմաթիվ հերոսներ սփյուռքյան մամուլի շնորհիվ են

դաստիարակվել որպես հերոս: Այսօր բազմաթիվ են մարտահրավերները, և մենք պիտի միասնական լինենք՝ դիմակայելու դրանց, հասնելու Հայոց ցեղասպանության և ժխտողականության դատապարտմանը»:

Նույն օրը հայ լրագրողները հանդիպեցին Նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին: ՀՀ սփյուռքի նախարար Յուրայի Յակոբյանի ներկայությամբ շուրջ երկու ժամ տևած հանդիպման ընթացքում Էդվարդ Նալբանդյանը նշեց, որ սփյուռքահայ լրատվամիջոցները մեծ դեր են խաղում Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, ինչպես նաև արտերկրում հայապահպանության գործում:

Պատասխանելով լրագրողների հարցերին՝ արտգործնախարարը մանրամասն ներկայացրեց արցախյան հիմնախնդրի հանգուցալուծման գործընթացը, Հայաստանի տարածաշրջանային քաղաքականությունը, Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները, հայ-ամերիկյան բարեկամական գործընկերությունը, Եվրոպական ընտանիքին մերձեցման քաղաքականությունը, արաբական, ասիական, լատինամերիկյան երկրների հետ հարաբերությունների զարգացման նպատակով ձեռնարկվող քայլերը, միջազգային օրակարգի խնդիրների վերաբերյալ Հայաստանի մոտեցումները, ՀՀ դերակատարությունը տարբեր միջազգային կառույցներում:

Երեկոյան համաժողովի մասնակիցներն այցելեցին Արամ Խաչատրյան համերգասրահ՝ ներկա գտնվելու ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ իրականացվող «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի շրջանակներում արգենտինահայ կոմպոզիտոր, «Արաքս» երգչախմբի հիմնադիր, խմբավար Ժան Ալմուխյանի 80 ամյակին և 55-ամյա երաժշտական գործունեության մեծարմանը նվիրված երեկոյին:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Փաստելով Հայոց ցեղասպանության իրողությունը և հայ ժողովրդի արդար պահանջատիրությունը միջազգային ատյաններում, Գիտակցելով, որ համաշխարհային հանրությանն այս խնդրին իրազեկելու և վերջինիս միակամ դատապարտումը ձևակերպելու գործում գրանցված արդյունքները լիարժեք բավարար չեն, Ընդգծելով Ցեղասպանության ճանաչման գործընթացը դիվանագիտական շահարկման վերածելու անընդունելիությունը, Հաշվի առնելով ցեղասպանությունների, մասնավորապես Հայոց ցեղասպանության, ճանաչման և դատապարտման կարևորությունը ապագայում նմանատիպ ոճիրների կանխարգելման գործում, Կարևորելով հայկական լրատվամիջոցների և առավելապես օտարալեզու մամուլում գործող հայ լրագրողների առաջադեմ, անաչառ և անկախ օտարազգի լրագրողների դերը Հայոց Ցեղասպանության, Հայ Դատի հիմնախնդրը ներկայացնելու, միջազգային ատյաններ հասցնելու և տարբեր երկրներում պետական,

հասարակական կարծիքի ձևավորման վրա ներազդելու ուղղությամբ

մենք՝ 2012 թվականի հոկտեմբերի 4-6-ը Երևանում կազմա-կերպված ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ մասնակիցներս

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ

որ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ընթացքում ներկայացված գեկույցները, դրանց քննարկումները և մտքերի փոխանակությունը հերթական անգամ հաստատեցին Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և հայկական Սփյուռքի հայ լրագրողների համագործակցության անհրաժեշտությունը՝ ի շահ համազգային հիմնախնդիրների լուծման, ի շահ Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման՝
գ հետևողականորեն, ծրագրավորված աշխատանքներ տանել տվյալ երկրում, համալքելով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ,
գ ակտիվացնել ջանքերը Ցեղասպանության վերաբերյալ միջազգային հանրային իրազեկման բարձրացման ուղղությամբ, համակարգված և հետևողական աշխատանք ծավալել մասնագիտական շրջանակների, մասնավորապես պատմաբանների հետ համակապես այն երկրներում, որոնք պաշտոնապես դեռևս չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը,
գ սփյուռքյան ՉԼՄ-ում նոր մարտավարություն որդեգրել և աշխատանքի առանցք դարձնել օտար ՉԼՄ-ի, հատկապես թուրք լրագրողների հետ նպատակային աշխատանքների կազմակերպումը,
գ հանրային լսարանի ուշադրության կենտրոնում պահել ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումների, Բաքվի, Սուևգայիթի, Մարաղայի և այլ բնակավայրերում իրականացված հայ բնակչության զանգվածային ջարդերի, Արցախի դեմ հրահրած պատերազմի, շարունակվող հայատյաց քաղաքականության շարունակվող դրսևորումների վերաբերյալ իրողությունները,
գ համակարգված դիմակայում հակահայկական քարոզչությանը և նպաստում Հայաստանի տեղեկատվական անվտանգության ամրապնդմանը: Կարևորում ենք օտար պետություններում ապրող և աշխատող բազմաթիվ հայ լրագրողների ներուժի օգտագործումն ու համախմբումը ի նպաստ համազգային խնդիրների լուծման, այդ թվում՝ աշխարհում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի, Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման և աշխարհում դրա ելույթի ճշգրիտ ներկայացման, Հաստատանքի Հանրապետության պետականության ամրապնդման, Հայաստանում ժողովրդավարության զարգացման, Հայաստանի Հանրապետության միջազգային իմիջի ամրապնդման, Հայաստանի տնտեսական հզորացման և միջազգային ներգրավվածության մեծացման: Միաժամանակ կոչ ենք անում բոլոր լրագրողներին ու լրատվամիջոցներին լինել ավելի միասնական համահայկական խնդիրները միջազգային հանրությանը ներկայացնելիս, առավել սերտացնել համագործակցությունը Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ՝ փոխադարձ հարգանքով:

Նպաստել համահայկական, ազգային նշանակության խնդիրների լուծմանը, համակարգել հայկական մամուլի ուժերն ազգային նշանակություն ունեցող լրբֆստական հարցերում, այդ թվում՝ աշխարհում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին, Ղարաբաղյան հարցի արդարացի լուծմանը և աշխարհում խնդրի ճշգրիտ ներկայացմանը, Հաստատանի Հանրապետության պետականության ամրապնդմանը, Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը և Հայաստանի Հանրապետության միջազգային իմիջի ամրապնդմանը, Հայաստանի տնտեսական հզորացմանը և միջազգային ներգրավվածության մեծացմանը:

Դիմում ենք միջազգային հանրությանը և այն պետությունների իշխանություններին, որոնք չեն ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը, քայլեր ձեռնարկել պատմական արդարության վերականգնման ուղղությամբ՝ գիտակցելով, որ անպատժելիությունն է ծնում նոր հանցագործություններ, ճանաչել և դատապարտել 1915 թվականին օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը, նշանակում է մարդկությանը հեռու պահել հետագա չարիքներից:

Պահանջում ենք Թուրքիայի ու Ադրբեջանի իշխանություններից ընդունել և հատուցել տարբեր ժամանակներում հայ ժողովրդի նկատմամբ գործած հանցանքները:

Մենք, 2012 թվականի հոկտեմբերի 4-6-ը Երևանում կազմակերպված ԼՐՏՎԱՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ մասնակիցներս, սույն հայտարարությամբ մեր պատրաստակամությունն ենք հայտնում աջակցելու ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ բարձրացված համազգային նշանակության խնդիրներին:

6 հոկտեմբերի 2012
թ.Երևան

***- «Լույսի» խմբագիր Դր. Էդիկ Բաղդասարյանի ելույթը հայ լրագրությանը 6-րդ համագումարում, տեսնել Մշակույթի բաժնում

Շայատան

Հոկտեմբերի 27-ի զոհերի համար Էջմիածնում հոգեհանգստյան արարողություն կատարվեց



27 Հոկտեմբերի 2012 - 16:22

Հոկտեմբերի 27-ին Միածնաեջ Մայր Տաճարում, Նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Հունգարիայում

սպանված ՀՀ ՁՈւ սպա Գուրգեն Մարգարյանի և 1999 թ. հոկտեմբերի 27-ին ոճրագործության հետևանքով ՀՀ Ազգային ժողովում զոհվածների համար:

Արարողության ավարտին Գուրգեն Մարգարյանի ընտանիքին և ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ անդրադառնալով 1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների հետևանքով զոհված պետական այրերի և Հունգարիայում վայրագորեն սպանված լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի հիշատակին:

Նորին Սրբությունը հորդորեց ներկաներին իրենց աղոթքներում մշտապես հիշել Նահատակ զավակներին, որպեսզի նրանց հիշատակն ու Նվիրյալ ծառայությունը լույս դառնան հայոց կյանքի համար:

Վեհափառ Հայրապետը նաև Սուրբ Հոգու միախթարությունը հայցեց Գուրգեն Մարգարյանի և զոհված հայոց պետական այրերի ընտանիքների համար՝ աղոթելով, որ Աստված Իր շնորհները հեղի նրանց կյանքի մեջ և նրանք զոհված հարազատների տեսիլքով իրենց կյանքն արդյունավորեն հայրենիքի շինության ու պայծառության համար:

HayNews.am

Ադամ Շիֆ. Լեռնային Ղարաբաղի վրա կենտրոնանալու ժամանակն է



Հոկտեմբեր 19, 2012 | 02:30

NEWS.am-ը ներկայացնում է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆի հոդվածը՝ իրապարակված «Asbarez»-ում:

Երբ մոտ 20 տարի առաջ փլուզվեց Խորհրդային Միությունը, տասնամյակներ շարունակ դանդաղ հասունացող ազգային եւ տարածաշրջանային հակամարտությունները հանկարծ կրկին ի հայտ եկան:

Կովկասում կենտրոնացած պայթարի օջախները տարիներ շարունակ մերթ հանդարտվում էին, մերթ բռնկվում, իսկ որոշ հակամարտություններ այդպես էլ մնացին չլուծված, քանի որ ամերիկացի եւ եվրոպացի քաղաքական գործիչները զբաղված էին Միջին Արեւելքի եւ Հարավային Ասիայի ճգնաժամերով, ինչպես նաեւ տնտեսական ներքին խնդիրներով:

Այդ բախումներից ամենաթեժը, որը կրկին բռնկվելու հավանականություն ունի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի կամ Արցախի միջեւ հակամարտությունն է՝ բացառապէս հայկական տարածքի, որը 1923թ. Խորհրդային իշխանության կողմից ընդգրկվել էր Ադրբեջանի կազմում, չնայած Հայաստանի հետ բազմադարյա մշակութային, լեզվական եւ կրօնական ընդհանրությանը:

1988-ին, երբ Միխայիլ Գորբաչովի օրոք Խորհրդային կենտրոնացված կառավարումն սկսեց թուլանալ, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը վերսկսեց Ադրբեջանից անկախանալու վաղեմի պայքարը, որը տեւեց մոտ 6 տարի եւ որի ընթացքում երկու կողմից էլ հազարավոր զոհեր եղան եւ հազարավոր մարդիկ հեռացան իրենց տներից. հրադադարը կնքվեց 1994թ. մայիսին:

Հետպատերազմյան տարիները հեշտ չեն. շփման գծում ադրբեջանցի դիպուկահարների հարձակումները եւ Ադրբեջանի կառավարության պաշտոնյաների բազմաթիվ սպառնալիքները, ներառյալ՝ բաղաբացիական ինքնաթիռներին հարվածելու սպառնալիքը, եթէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը շահագործի Ստեփանակերտի օդանավակայանը: Բացի այդ, Արցախի ժողովուրդն ամեն օր բախվում է շուրջ 100 հազար ականների սպառնալիքին, որոնք տեղադրվել են 1990-ականների մարտերի ընթացքում եւ որոնց մի մասը դեռեւս չեն վնասագործվել:

1992թ.-ից սկսած ԱՄՆ-ն, Ֆրանսիան եւ Ռուսաստանը գլխավորեցին միջազգային միջնորդական ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով: Չնայած բազմաթիվ ջանքերին, 2012թ. գործընթացը դադարեցվեց:

Երկու երկրների միջեւ իրավիճակը սրվեց Ադրբեջանի բանակի սպա Ռամիլ Սաֆարովին ազատելուց հետո, որը 2004թ. քնած ժամանակ կազնահարել էր հայոց բանակի լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին եւ Բուդապեշտի դատարանի կողմից դատապարտվել ցմահ բանտարկության:

Օգոստոսի 31-ին Սաֆարովն ուղարկվեց Ադրբեջան՝ պատժի մնացած ժամկետն այնտեղ կրելու համար, սակայն այնտեղ որպէս հերոս ընդունվեց եւ վարդերի փնջով շրջեց Բաթլի փողոցներում: Նախագահ Իլհամ Ալիեւն անմիջապէս ներում շնորհեց մարդասպանին՝ տալով մայրի կոչում, բնակարան եւ 8 տարվա աշխատավարձը:

Սաֆարովի հանդիսավոր ընդունելությունը Բաթլում ժամանակակից Ադրբեջանի հայատյացության ապացույցն է:

Քնած մարդուն գրեթէ գլխատելը որպէս հերոսություն ընկալելն անբացատրելի եւ անընդունելի է, այն հաստատում է բազմաթիվ հայերի մտավախությունը, որ Արցախի ազատ ժողովրդի՝ ադրբեջանական ինքնավարության կազմ մտնելը կհանգեցնի արյունահեղության:

Ես արդէն վաղուց աջակցում եմ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշմանը, եւ կարծում եմ, որ եթէ ԱՄՆ-ը եւ Միսկի

խմբի գործընկերները Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ուղղությամբ Արցախի ժողովրդի կամքն արտացոլող ջանքեր չձեռնարկեն, մարտական գործողությունների վերսկսման հեռանկարը եւ դրա սարսափելի հետեւանքները կաճեն: Այս հարցի կարգավորումը բոլորի շահերից է բխում, սա 2013 թ. դիվանագիտական առաջնահերթությունը պետք է լինի:

Պատերազմի տարիներն ու տնտեսական մեկուսացումը Լեռնային Ղարաբաղը թողեցին թույլ զարգացած վիճակում, ուստի ամերիկահայ համայնքի աջակցությամբ այնդում եմ, որպէսզի ԱՄՆ-ն մեծացնի Արցախին տրամադրվող օգնության չափը:

Սակայն ուժեղ, անկախ Արցախի կառուցումը դեռ ամբողջը չէ: Ադրբեջանին պետք է հիշեցնել, որ իր գործողությունների գինը բարձր էր: Հարկավոր է դադարեցնել Վաշինգթոնի կողմից Ադրբեջանին ռազմական օգնության տրամադրումը եւ դրանով ցույց տալ, որ Սաֆարովի ներումն անընդունելի էր եւ որ ԱՄՆ-ն չի հանդուրժի Հայաստանի կամ Արցախի դեմ որեւէ ագրեսիա:

Անթույլատրելի է, որ Արցախի ժողովուրդը՝ մեծամասնությամբ հայեր եւ քրիստոնյաներ, հայտնվի Ալիեւի ձեռքում: Մարդասպանին փառաբանելով՝ նա եւ իր ժողովուրդը ցույց տվեցին իրենց իրական էությունը եւ համոզիչ փաստարկներ տվեցին Արցախի անկախության ճանաչումն արագացնելու համար:

Ամերիկյան կոնգրեսական. ԱՄՆ-ն պետք է դեսպանատուն բացի Ղարաբաղի մայրաքաղաքում

Հոկտեմբեր 18, 2012 | 00:08

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի կազմակերպած բանավեճի ժամանակ ԱՄՆ կոնգրեսականներ Հովարդ Բերմանը եւ Բրեդ Շերմանը իրար դեմ պայքարել են Սան-Ֆրեանսկոյի ամերիկահայերի ձայների համար: Այս մասին հաղորդում է Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը:

Համայնքի ավելի քան 300 անդամներ հավաքվել են Էնսինոյի դպրոցի դահլիճում, որպէսզի ծանոթանան երկու հարգարժան կոնգրեսականների դիրքորոշումներին եւ առաջարկներին:

Բանավեճի մասնակիցները անդրադարձել են մի շարք թեմաների, այդ թվում Հայոց Ցեղասպանությանը եւ Եղեռնից տուժածների ապահովագրության փոխհատուցմանը, Լեռնային Ղարաբաղին ուղղված հատկացումներին եւ դրանց կիրառությանը, Հունգարիայի կառավարության կողմից Ռամիլ Սաֆարովին Ադրբեջան արտահանձնմանը ու ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ առեւտրային համաձայնություններին, ինչպէս նաեւ Վրաստանում ջավախահայերի դրությանը եւ այս տարածաշրջանի օգնությանը:

Ինչպէս հաղորդում է «Asbarez»-ը, կոնգրեսական Շերմանը ընդունել է, որ Միլիտարի ընդդիմության որոշ տարրեր «ծայրահեղ թշնամաբար են վերաբերում քրիստոնյաներին»: Այն հարցին, թե ինչպէս կարող է կոնգրեսն օգնել սիրիահայերին, կոնգրեսական Բերմանը հայտնել է, որ « Գոյություն ունեն ԱՄՆ-ի Միջոցազային

գարգացման գործակալության ուղիղ եւ առավել գաղտնի միջոցներ, որոնց նպատակն է Սիրիայի քրիստոնեական համայնքների աջակցությունը եւ նրանց արդեն օգնությունն է ցուցաբերվել»:

Կոնգրեսական Շերմանը դեմ է հանդես եկել ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին վաճառվող զենքին. «Մենք չպետք է ոչ մի տեսակ ռազմական օգնություն ցուցաբերենք Ադրբեջանին, եւ հաշվի առնելով այն, թե ինչ տեղի ունեցավ Հունգարիայում եւ այն, թե ինչպես վարվեցին մարդասպանի հետ Բաքվում, մենք չպետք է շարունակենք ՆԱՏՕ-ի ուսումնավարժանքները, իմանալով, որ հնարավոր է հաջորդը, ում կարող են կացնահարել եւ սպանել, կարող է ամերիկացի զինվոր լինել»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչու է ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Լեռնային Ղարաբաղին հատկացված հատկացումների մեծ մասը պահվում Պետդեպարտամենտում՝ կոնգրեսական Շերմանը ասել է. «Ես ինդրել եմ օտարերկրյա գործողությունների համար նախատեսված հատկացումների օրինագծի մեջ մտցնել որոշ ձեւակերպումները, ըստ որի պետք է իրական օգտագործել այն գումարները, որոնք հատկացվել են Արցախի ժողովրդի գարգացման համար եւ ես ուրախ եմ հայտնել, որ կոմիտեն այս ձեւակերպումները մտցրել է իր հաշվետվության մեջ»:

Պատասխանելով Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու անհրաժեշտության հարցին՝ կոնգրեսական Շերմանը հայտնել է «Ես կարծում եմ, որ Լեռնային Ղարաբաղը անկախ պետություն է եւ վերջ: Ժամանակն է արդեն Ստեփանակերտում դեսպանատուն բացել: Լեռնային Ղարաբաղը պետություն է, քանի որ դա այն է ինչ ցանկանում է նրա ժողովուրդը»:

Հովարդ Բերմանը այս հարցում առավել զգուշավոր է. «Լոս Անջելեսի ժողովուրդը չի կարող որոշել Լեռնային Ղարաբաղի փոխարեն, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պետք է ինքը որոշի: Ժողովրդի ինքորոշման հարցը չափազանց կարեւոր է: Ես կասկած չունեմ, որ նա անկախություն է ցանկանում»:

Ինչ վերաբերում է Հունգարիայի կողմից ադրբեջանցի մարդասպանի արտահանձնմանը, ապա Բրեդ Շերմանը վստահություն է հայտնել, որ այս փաստը կազդի Հունգարիայի հետ ամերիկյան ռազմական հարաբերությունների վրա...մի քանի օր առաջ ես նամակ եմ ուղարկել պետական քարտուղարին եւ պաշտպանության նախարարին, նշելով, որ Ադրբեջանը պետք է, անկասկած, հեռացվի նմանատիպ ռազմական համագործակցություններից: Կոնգրեսական Բերմանը ավելացրել է, որ «ՆԱՏՕ-ի յուրաքանչյուր երկիր, այդ թվում եւ Հունգարիան, այժմ պարտավոր են կանգնեցնել Ադրբեջանի մասնակցությունը «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, քանի որ այս սխալը չի ուղղվել»:

Վերջում Հովարդ Բերմանը խոստացել է շարունակել պայքարը «ԱՄՆ-ի կողմից Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ: Դա ոչ թե պարզապես իմ պարտականությունն է որպես կոնգրեսական, այլ նաեւ որպես հրեա, ում հարազատ ժողովուրդը տառապել է իր ցեղասպանությունից: Քանի որ աշխարհը անտեսել է ձեզ, ես կշարունակեմ պայքարել հայկական եկեղեցու եւ հայ

ժողովրդի համար, ովքեր ապրում են Թուրքիայում...եւ կայաքարեմ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման եւ բարօրության իրավունքի համար, որը եղել է հին Հայկական թագավորության մի մասը»:

Արցախի նախագահի մամուլի քարտուղար. Նոր Հարավային Ուելս նահանգի բանաձեւը քաղաքական եւ բարոյական լուրջ ձեռքբերում է



Հոկտեմբեր 25, 2012
Ավստրալական Նոր Հարավային Ուելս նահանգի Օրենսդիր խորհրդի կողմից ընդունված Լեռնային Ղարաբաղի հանրապետության եւ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման բանաձեւը քաղաքական եւ բարոյական լուրջ ձեռքբերում է: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասել է ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը՝ ընդգծելով, որ սա վերջին 3 տարում հայկական կողմի ամենալուրջ ձեռքբերումն է:

Ըստ Բաբայանի՝ Նոր Հարավային Ուելս նահանգը պարզապես վարչական միավոր չէ. «Նոր Հարավային Ուելսը եղել է այն հիմնաքարը, որի շուրջ ձեւավորվել է ժամանակակից ավստրալական պետությունը: Երբ այդ ամենախիտ բնակեցված, պատմականորեն ամենաին նահանգը ճանաչում է ԼՂՀ-ի անկախությունը, դա շատ կարեւոր է: Դրան կհետեւի ԼՂՀ-ի անկախության ճանաչումը ոչ միայն ավստրալական մասցած նահանգների, այլեւ աշխարհի այլ երկրների կողմից»:

Բաբայանը նաեւ նշել է, որ այդ ուղղությամբ աշխատանքները կշարունակվեն առանց որեւէ հիստերիկ հայտարարությունների, աղմուկի, հանգիստ պայմաններում:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հոկտեմբերի 25-ին ավստրալական Նոր Հարավային Ուելս նահանգի Օրենսդիր խորհուրդը բանաձեւ էր ընդունել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման մասին: Բանաձեւն ընդունելով՝ Օրենսդիր խորհուրդը «Ավստրալիայի կառավարությանը կոչ էր արել պաշտոնապես ճանաչել ԼՂՀ-ի անկախությունը եւ խորացնել Ավստրալիայի հարաբերությունները ԼՂՀ-ի եւ նրա քաղաքացիների հետ»:

Մենք նպաստել ենք Անիի կործանմանը. Հուշարձանագետ

Հոկտեմբեր 22, 2012 | 13:24

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի նախագահ Սամվել Կարապետյանը իր տեսաբլոգում պատմել է 2000 թվականին Անի կատարած ուխտագնացության մասին:

Թանգարանի կարգավիճակ ունեցող Անիի հսկիչները, իմանալով, որ խումբը Հայաստանից է, շրջապատել են ուխտագնացության մասնակիցներին և խնդրել Հայաստան վերադառնալիս մի հնարով դադարեցնել Ախուրյանի հանդիպակաց ափին շահագործվող քարհանքի պայթեցումները...

Կարապետյանը պատմել է, թե ինչպես է սենյակ առ սենյակ «նահանջել» ստորգետնյա Անին:

«Սա խաղաթուղթ է թուրքերի ձեռքում», - ասում է Սամվել Կարապետյանը, ով այն ժամանակ արված երկու լուսանկար է ներկայացրել:

ԱՄՆ ռազմածովային ուժերի քարտուղարը կարևորում է Հայաստանի հետ համագործակցությունը

29.10.12



Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմածովային ուժերի քարտուղար Ռեյ Մեյբլուը այսօր Երևանում հանդիպում է ունեցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ընդլայնման հնարավորությունները և տարածաշրջանային ու համընդհանուր անվտանգությանը վերաբերող հարցեր: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության տարածած հաղորդագրությունից:

Ռազմածովային ուժերի քարտուղար Մեյբլուն իր խորը գնահատանքն է հայտնել Աֆղանստանում իրականացվող առաքելությանը և Կոսովոյի խաղաղապահ գործողություններին Հայաստանի մասնակցության վերաբերյալ: Նա նաև անդրադարձել է պաշտպանական բարեփոխումների, խաղաղապահ գործողությունների և ուսուցումների, ինչպես նաև արհեստավարժ կրտսեր սպայական կազմի ձևավորման կարևորությանը:

Քննության է առնվել նաև Եվրոպայում ԱՄՆ ծովահետևակային ուժերի Սևծովյան ռոտացիոն ուժերի շրջանակում իրականացվող համագործակցությունը:

«Շնորհակալ եմ հայ ժողովրդին ջերմ ընդունելության ու հյուրընկալության համար, - ասել է Ռազմածովային ուժերի քարտուղար Մեյբլուն, - մենք կարևորում ենք Հայաստանի հետ մեր գործակցությունը և իմ այս այցը փաստում է հարավկովկասյան տարածաշրջանի կարևորությունը»:

Ռեյ Մեյբլուն Միացյալ Նահանգների ռազմածովային ուժերի 75-րդ քարտուղարն է: Որպես ռազմածովային ուժերի քարտուղար նա ղեկավարում է ամերիկյան նավատորմի և ծովահետևակային կորպուսի գործունեությունը, պատասխանատու է 150 միլիարդ ԱՄՆ դոլարից ավել կազմող բյուջեի ու շուրջ 900.000 հոգի կազմող անձնակազմի համար: Ռեյ Մեյբլուն այս պաշտոնում նշանակվել է նախագահ Օբամայի կողմից 2009թ.-ին:

Արեւմտյան Շայաստան

«The Independent»-ը գերմանացի սպաների լուսանկար է հրապարակել՝ արված Հայոց ցեղասպանության զոհերի ֆոնին

Հոկտեմբեր 22, 2012



Արիտանական «The Independent»-ը լուսանկար է հրապարակել, որում Հայոց ցեղասպանության զոհերի մարմինների ֆոնին գերմանացի սպաներ են լուսանկարված: Լուսանկարը, հավանաբար, արվել է 1915թ. ամռանը: Այնտեղ պատկերված են թուրք երկու սպաներ, քրդական հագուստով մի մարդ եւ գերմանական բանակի համազգեստով երկու գերմանացիներ: Հրապարակման հեղինակ Ռոբերտ Ֆիսքը հարց է տալիս՝ արդյոք գերմանացիները 1915թ. հայ բրիտանացիների զանգվածային սպանության կողմնակիցներ են եղել: Նա հիշեցնում է, որ սա այդ դեպքերը պատկերող լուսանկարներում գերմանացիներին ներկայության միակ փաստը չէ:

«Առաջին համաշխարհայինի ժամանակ գերմանացի դիվանագետները սարսափով եւ քննադատորեն էին արձանագրում թուրքական նահանգներում 1,5 միլիոն հայերի բռնազարթը եւ զանգվածային սպանությունները՝ թուրք մարդասպաններին տակնաքններ անվանելով», - գրում է Ֆիսքը:
Նա նաեւ նշում է, որ սպա Արմին Վեգները կյանքը վտանգելով Ցեղասպանության ընթացքում լուսանկարել

եր հայերին, իսկ ավելի ուշ ձերբակալվել եւ կտտանքների էր ենթարկվել Գեստապոյի կողմից:

Հողվածում կշվում է, որ իր աշխատություններում հայ պատմաբան Փիթեր Բալաթյանը պատմել է, թե ինչպես Deutsche Bank-ն զբաղվել է երկաթուղու ֆինանսավորմամբ, որով տեղի է ունեցել հայերի արտաքսումը: Ըստ պատմաբանների՝ բանկի աշխատակիցներն ապշել են տեսածից: «Պրոֆեսոր Բալաթյանը եւ այլ պատմաբաններ նույնպես հայտնաբերել են Հայոց ցեղասպանության գերմանացի որոշ վկաների կապը Նացիստների վարչակարգի հետ», - ընդգծում է Ֆիսքը:

Այսպես, մասնավորապես Կոնստանտին ֆոն Ներյաթը կցված է եղել թուրքական բանակին եւ հայերի դեմ դիտարկումներ անցկացրել: Արդյունքում Հիտլերի օրոք Նա դարձել է արտգործնախարար:

Ռուդոլֆ Հեսսը 1916 թվականին Թուրքիայում եղել է գերմանական կապիտան: 1940- 43թթ. Նա եղել է Օսվենցիմի պարետ: Նա դատապարտվել է եւ կախաղա հանվել 1947 թվականին:

Թուրքիայում Գյուլենի շարժումը աչք է դրել հայկական եկեղեցիների վրա



Հոկտեմբեր 18, 2012 | 16:23

Թուրքիայի հարավ-արեւելյան Էրիուհի շրջանում հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցին ամբողջովին ոչնչացման վտանգի առաջ է, քանի որ Ֆեթհուլլահ Գյուլենի կրոնական շարժումը Նախատեսում է այդ տեղում կրոնական դպրոց կառուցել:

Թուրքական Aykiridogrular կայքի փոխանցմամբ՝ Էրուհի շրջանի Դըհի թաղամասում գտնվող եւ կիսավեր վիճակում գտնվող հայկական եկեղեցու տեղում Գյուլենի շարժումը ցանկանում է կրոնական դպրոց կառուցել եւ պատրաստվում է գնել այդ տարածքը:

Չնայած, որ տեղացիները եւ Էրուհի քաղաքապետարանում քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության անդամները պայքարին, Գյուլենի շարժումը տեղի քայմաքամից ստացել է մի որոշում, իբր այնտեղ որեւէ եկեղեցի գրանցված չէ:

Համշենահայերի «Vova» խումբը համերգներով հանդես կգա Կրասնոդարի երկրամասում

Հոկտեմբեր 20, 2012

Կրասնոդարի երկրամասում համերգներով հանդես կգա համշենահայերի «Vova» խումբը: Ինչպես հաղորդում է Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթի տեղեկատվական կենտրոնը, համերգները տեղի կունենան Սոչիում՝ հոկտեմբերի 26-ին եւ Ապշերոնսկում՝ հոկտեմբերի 28-ին:

խումբը երգերը կատարում է համշենահայերի բարբառով՝ ազգային երաժշտական գործիքների նվագակցությամբ:

Նշենք, որ խումբն առաջին անգամ համերգներով հանդես էր եկել Մոսկվայում, այս տարվա հունիսին:վ

Հայի կառուցած աշխարհի ամենագեղեցիկ փոստատունը Թուրքիայում հյուրանոց են դարձնում



Հոկտեմբեր 17, 2012 | 20:04

Աշխարհում ամենագեղեցիկ փոստատների շարքում 7-րդ տեղը զբաղեցնող Մարդինի պատմական փոստատունը շուտով վերածվելու է հյուրանոցի:

Թուրքական Sabah-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Մարդին քաղաքի գլխավոր ճարտարապետ Սարգիս Լուլեի կողմից 1890-ին կառուցած փոստատունը բուտիկ հյուրանոցի է վերածվում:

Նշվում է, որ փոստատան շենքը Թուրքիայի փոստատների վարչությունից 10 տարով վարձակալվել է՝ հանձնվելով Մարդինի Աթաթուրքի համալսարանի կազմում բացված Տուրիզմի բաժնի ղեկավարմանը:

Նշենք, որ Մարդինի փողոցներից մեկը 2 տար առաջ վերանվանվել է Սարգիս Լուլե Գիզոյի անունով:

Պոլստ հայոց պատրիարքարանը այլեւ չի օրհնում խառն ամուսնությունները



Հոկտեմբեր 11, 2012

Թուրքիայի Հայոց պատրիարքարանը հոկտեմբերի 1-ից սկսել է կիրառել Նոր կարգ, ըստ որի՝ այլ կրոն դավանող անձանց հետ հայերի ամուսնությունները այլեւ չեն օրհնվում, ինչպես Նաեւ Նման դեպքերում թույլ չի տրվում եկեղեցում հարսանեկան արարողություն անցկացնել: Այդ մասին այսօր հաղորդում է Hurriyet Daily News-ը:

ինչպես հաղորդել է «Ազատություն» ռադիոկայանը, խառն ամուսնությունների դեպքում եկեղեցում հարսանեկան արարողության անցկացումը թույլատրվել էր 2000 թվականին՝ Պոլսո Յայոց պատրիարք Մետրոպ Մուֆաֆյանի հավանությամբ, սակայն դա հայ համայնքի ներսում բանավեճի պատճառ է դարձել:

«Մենք գործադրում ենք մեր եկեղեցում արդեն գոյություն ունեցող օրենքը: Ես չեմ ցանկանում սրանից բացի որևէ այլ հայտարարություն անել», - թուրքական պարբերականի հայազգի լրագրող Վերջինան Չիֆլիօղլուին ասել է Պոլսո Յայոց պատրիարքի փոխանորդ Արամ Աթեշյանը: ռում:

Ստամբուլում վերսկսվում են արեւմտահայերենի դասընթացները

Հոկտեմբեր 18, 2012

Ստամբուլում Հայ մշակույթի եւ գորակցության միությունը հոկտեմբերի 19-ից կազմակերպում է արեւմտահայերենի դասընթացներ:

Հայ մշակույթի եւ գորակցության միության կայքում տեղադրված հայտարարության մեջ նշվում է, որ արեւմտահայերենի ուսուցման առաջին փուլը կազմված կլինի 3 ամսից, որի ընթացքում մասնակիցները կսովորեն հայերենի այբուբենը, կարդալ եւ գրել, հաշվել թվեր, ամիսներ, օրեր, թվարկել գույները եւ սովորել առաջին հաղորդակցության համար անհրաժեշտ բառերը:

Նշվում է, որ դասընթացի մասնակիցների քանակը սահմանափակ է եւ կարող են մասնակցել առավելագույնը 10 հոգի:

Ստամբուլում Հայ մշակույթի եւ գորակցության միության կողմից արդեն 1,5 տարի է, ինչ կազմակերպում է արեւմտահայերենի դասընթացներ:

Միջազգային

PKK-ն պայթեցրել է Իրան-Թուրքիա գազատարը

Հոկտեմբեր 19, 2012

PKK-ն (Թուրքիստանի բանվորական կուսակցություն) հոկտեմբերի 18-ի երեկոյան Թուրքիայի Արդը Նահանգի Ալաշկերտի շրջանում պայթեցրել է դեպի Երզրում ձգվող Իրան-Թուրքիա գազատարը:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ տեղի ունեցած հզոր պայթյունից հետո հրդեհ է բռնկվել, որի բարձրությունը հասել է տասնյակ մետրերի: Այդ ընթացքում գազի հոսքն անջատել են, որից հետո միայն հաջողվել է հրդեհը մարել:

Ավելի ուշ, պայթյունը կազմակերպած PKK-ի զինյալներին հայտնաբերելու համար գործողությունների դուրս եկած թուրք զինվորականների ռազմական մեքենան հայտնվել է տեղադրված ականի վրա եւ պայթել:

Պայթյունի հետեւանքով 28 զինվորական վիրավորվել են, որոնցից 10-ը ծանր վնասվածքներով տեղափոխվել են Երզրումի հիվանդանոց:

Արեւելագետ. Թուրքիան ցանկանում է ազատվել սիրիահայերից

Հոկտեմբեր 23, 2012

Թուրքիան ցանկանում է ազատվել Սիրիայի հյուսիսում բնակվող հայերից: Լրագրողներին այսօր՝ հոկտեմբերի 23-ին, Նման տեսակետ է հայտնել Հայաստանի ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Սաֆրաստյանը: Ըստ նրա՝ Նման քաղաքականությունը թեեւ երկրորդական, բայց, այնուամենայնիվ, Անկարայի օրակարգի կարեւոր կետ է:

«Հայկական սիյուռնի այդ գաղթօջախի վերացումը, մասնավորապես, Հալեպի համայնքի, միշտ էլ Թուրքիայի նպատակներից է եղել: Այդ նպատակները կրկնում են ապստամբների հնչեցրած արտահայտությունները, որոնցում արդեն 1-2 անգամ հակահայկական տամարդություններ են նկատվել», - նշել է Սաֆրաստյանը: Այս տեսակետից, հավելել է նա, չի կարելի բացառել Հալեպի հայերին սպառնացող պոտենցիալ վտանգը, եթե թուրքական զորքերը հատեն սիրիական սահմանը՝ հաշվի առնելով, որ քաղաքը դրանից ընդամենը 50-60 կմ է հեռու: «Նման հայտարարությունները կարող են նաեւ վախեցնող բնույթի լինել, որպեսզի հայերը լքեն տարածաշրջանը: Դա մեզ համար մեծ կորուստ կլինի, քանի որ Հալեպի համայնքը ավանդաբար մեր սիյուռնի ամենապահպանողական-ազգային գաղթօջախն է», - ասել է Սաֆրաստյանը: Այս կապակցությամբ, մեկնաբանելով Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Թուրքիայի վարչապետ Էրդողանի հեռախոսազրույցի մասին հրապարակումները՝ ըստ որոնց Պուտինը կտրականապես զգուշացրել է չհատել սահմանը, Սաֆրաստյանը նկատել է, որ երկու երկրների հարաբերություններում նոր հարցեր են ի հայտ եկել՝ նկատի ունենալով Մոսկվա-Դամասկոս ինքնաթիռի հարկադիր վայրէջքը, նաեւ՝ Ռուսաստանի Նախագահի Անկարա այցի չկայանալը:

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր կուսակցապետը այցելելու է Դիարբեքիի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին



Հոկտեմբեր 25, 2012

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության առաջնորդ Զեմալ Զըլըչդարօղլուն առաջիկա օրերին այցելելու է Դիարբեքիի: Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ իսլամական Կուրբան բայրամի տոնի կապակցությամբ «Ժողովրդա-

հանրապետական» կուսակցության առաջնորդ Զեմալ Զըլըզդարովուն այցելելու է գլխավորապես քրդաբնակ Դիարբեքիր:

Թուրք կուսակցապետի ծրագրում նախատեսված է այցելություն Դիարբեքիրի բաղաբապետ Օսման Բայդեմիրին, Դիարբեքիրի նահանգապետին եւ հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցի:

Նշենք, որ Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցում ընթանում են վանական համալիրի վերանորոգման աշխատանքների վերջին փուլը եւ նոյեմբերի 4-ին նախատեսված է պատարագ իրականացնել ամբողջովին վերանորոգված համալիրում:

Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու միակ նախապայմանը Հայոց ցեղասպանության ճանաչումն է. Եվրախորհրդարանի նախագահ

19 Սեպտեմբերի 2012



Եվրախորհրդարանի նախագահը նշել է, որ Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու միակ նախապայմանը Հայոց ցեղասպանության ճանաչումն է:

Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցը երկուշաբթի օրը հայտարարել է, որ Թուրքիան կարող է անդամակցել Եվրամիությանը միայն Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո:

«Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը և դա կլինի ԵՄ մուտք գործելու նրա նախապայմանը»,- նշել է Շուլցը, ում հայտարարությունը տեղադրվել է Գերմանական Չախ կուսակցության պաշտոնական կայքում, որը նույնպես կիսում է նրա դիրքորոշումը:

Շուլցն ընդգծել է, որ «Թուրքիան պետք է առերեսվի իր պատմությանը»:

Աղբյուրը նշում է, որ ԵՄ նախագահը այս հայտարարություններն արել է Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցերով նախարար Էգեմեն Բաղըջի հետ հանդիպման ընթացքում:

Հիշեցնենք, որ Էգեմեն Բաղըջը հայտնի է իր հակահայ հայտարարություններով և իր հայտարարություններում բազմիցս է ժխտել Հայոց ցեղասպանության ընդունումը:

Թուրքիան եթե մտավ Սիրիա, 3-րդ համաշխարհային պատերազմն է սկսվելու. Al Quds Al Arabi

Չոկտեմբեր 15, 2012

Թուրքիայում գտնվող Al Quds Al Arabi արաբական հայտնի պարբերականի գլխավոր խմբագիր Աբդուլբարի Ատվանը թուրքական NTV-ի հետ հարցազրույցում Թուրքիային ողջախոհության կոչ է արել՝ խորհուրդ տալով չմտնել Սիրիա:

Լոնդոնում լույս տեսնող Al Quds Al Arabi պարբերականի գլխավոր խմբագիր Աբդուլբարի Ատվանը թուրքական NTV-ի հետ զրույցում անդրադառնալով Սիրիայի իրադարձություններին, նշել է, «Իմ կարծիքով՝ սահմանին տեղի ունեցող լարվածությունը՝ Թուրքիային պատերազմի մեւ բաշելու սադրանք է: Սիրիան կորցնելու բան չունի, չէ որ այնտեղ ներքին պատերազմ է: Թուրքիան կորցնելու շատ բան ունի: Եթե Թուրքիան Սիրիա մտնի, կսկսվի 3-րդ համաշխարհային պատերազմ», -ասել է արաբ խմբագիրը:

Աբդուլբարի Ատվանը Թուրքիային ողջախոհության կոչ է արել՝ պնդելով, որ Թուրքիան չպետք է ելաթարկվի սադրանքներին: Նա նշել է, Սիրիայի հարցում ԱՄՆ-ի քաղաքականությունը նոյեմբերի 6-ին տեղի ունենալիք նախագահական ընտրություններից հետո մեծ փոփոխություններ չի կրի: «ԱՄՆ-ը Սիրիա գորք չի ուղարկի, այնտեղ նավթ չկա», -ասել է Al Quds Al Arabi պարբերականի գլխավոր խմբագիրը:

Թուրքիան ստեղծվել է հայերին կոտորելու արդյունքում. TARAF

Սեպտեմբեր 15, 2012 | 00:04

Թուրքական հայտնի Taraf պարբերականի համակարգող, սյունակագիր Մարգար Եսայանն իր «Այս թուրքը մեզ կկոտորի» վերնագրոց հրապարակման մեջ անդրադարձել է քրդական հարցին՝ մեջբերելով նաեւ Հայոց ցեղասպանության հետ կապված մի քանի մանրամասներ:

NEWS.am-ը ներկայացնում է Մարգար Եսայանի հրապարակումից մի հատված.

«Թուրքիան բոլոր քրիստոնյաներին, հատկապես հայերին կոտորելու եւ վնդդելու արդյունքում է ստեղծվել: Չարմացաք, բայց Թուրքիայի ազգային պաշտպանության նախկին նախարար Վեջդի Գյոնուլն ասում էր. «Նրանք (քրիստոնյաները-խմբ) հեռացան, մեր հավաքականությունն ապահովեցինք, ազգ դարձանք: Մի խոսքով՝ բացառիկ ճիշտ խոսքեր: Թուրքերին ներկայացնող իթթիհադականները (երիտթուրքեր-խմբ) քրդերին ներկայացնող ֆեռդալ պարոնների հետ համաձայնության եկան միասին հայերին ոչնչացնել, ունեցվածքը կիսվել, հետո էլ երկիրը միասին ղեկավարել:

Արեցին...

Հետո ի՞նչ եղավ: Իթթիհադականներին վերացրած, սակայն կոտորողի մտածելակերպից չտարբերվող Մուսթաֆա Զեմալը մոռացավ քրդերին բացահայտ խոստացած ինքնավարությունը եւ սկսվեցին սպանվել քրդերը: Արդեն հայերի տեղը քրդերն էին զբաղեցնում:

Քանի որ ռիսկը վերջացել էր, պետությունն էր ստեղծվել, աշխարհը խոստացել էր, որ Թուրքիայից հաշիվ չի պահանջի Հայոց ցեղասպանության համար: Այսինքն՝ Օաջալանի եւ PKK-ի՝ Մուսթաֆա Զեմալի հանդեպ հիացմունքն այնտեղից է գալիս:

Այսօրվա որոշ քողերը, ովքեր ասում են. «Մենք ազգային փոքրամասնությունն չենք, մենք հանրապետությունը ստեղծող հիմնական տարրն ենք», չգիտեն, թե ինչ անբարոյական անցյալի են այդ բառերով տեր կանգնում: Սակայն այդ ասողները Մուսթաֆա Զեմալի մեթոդներին հարգանքով են վերաբերվում հաստատ:

Սա չեմ գրում, որ արանքում Ցեղասպանությունն էլ գրեմ: Ուղղակի թեմայի այս կողմի մասին գրողներ շատ չկան եւ գուցե սա գրելուց մի օգուտ լինի, քանի որ քողական հարցի հիմքում այս անցած եւ չորացած մտածելակերպն է», - գրում է Taraf-ի սյունակագիրը:

Իրանագետ. Թավրիզում ապրող «ադրբեջանցիները» կասկածում են իրենց ադրբեջանցի լինելու մեջ

Սեպտեմբեր 19, 2012

Սաֆարովի հերոսացումից եւ Թուրքիայի պատվո հյուպատոսության բացումից հետո Ադրբեջանում տեղաբնիկ ժողովուրդների շրջանում մթնոլորտ է փոխվել: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 19-ին հրավիրված ասուլիսին ասաց իրանագետ Վարդան Ոսկանյանը:

Նա խնդրեց Ադրբեջանի հետ կապված ազգային փոքրամասնությունն ձեւակերպումը փոխել «տեղաբնիկ ժողովուրդ» ձեւակերպման հետ, քանի որ այդ ժողովուրդները իրականում փոքրամասնությունն չեն, օրինակ, միլիոն ու կես թալիշները: «Այդ ժողովուրդները եղել են տարածքում, բնակվել են եւ ունեցել են իրենց պետականությունը մինչեւ Ադրբեջանի Հանրապետության ստեղծումը», - ավելացրեց իրանագետը: Նա ընդգծեց, որ հյուպատոսությունը բացվել է Լենքորանում՝ թալիշաբնակ տարածքում կարելի է նաեւ ասել փաստացի մայրաքաղաքում: «Այդ տարածքում համարյա, թե թուրքալեզու բնակչություն չկա: Այդ տեսակյունից Թուրքիան ցանկանում է մուտք գործել մի տարածք, որը համարվում է Իրանի ազդեցության ոլորտ եւ նպատակ ունի Իրանին դուրս վանել այդ տարածքից», - ավելացրեց Վարդան Ոսկանյանը: Իրանագետը անդրադառնալով ԱՄՆ Կոնգրեսի հայտարարությանը կապված Իրանի ադրբեջանցիների ինքնորոշման իրավունքի հետ եւ ասաց, որ նախագիծը լի է հակասություններով եւ տարրական սխալներով: Իրանագետի փոխանցմամբ՝ լեզվական առումով նրանք նույնն են, բայց այդ մարդիկ իրենց չեն համարում ադրբեջանցի: «Օրինակ, ավստրիացուն, երբ ասեք գերմանացի, նա ուղղակի կվիրավորվի: Մեկ օրինակ եւս, Արցախի ժողովրդի շրջանում, որեւէ մի կասկած չկա իրենց հայ լինելու հարցում: Բայց տեսե՛ք Իրանի պարզայում, այսպես ասած, այդ ադրբեջանցիները խիստ կասկածում են իրենց ադրբեջանցի լինելու մեջ: Տեսե՛ք, մենք ադրբեջանցիների հետ փաստացի պատերազմի իրավիճակում ենք չէ, բայց Հայաստանն են այցելում բազմահազար չակերտավոր ադրբեջանցիներ, բայց որեւէ հայի մտքով չի անցնում գնալ Ադրբեջան, քանի որ մենք մեզ մեկ ամբողջություն ենք դիտարկում», - պարզաբանեց

իրանագետը: Վարդան Ոսկանյանը նկատեց, որ մի հետաքրքիր շղթա է ստացվում, երբ մի կողմից ադրբեջանական գործունը ավելի ակտիվ է օգտագործվում Իրանի դեմ, իսկ մյուս կողմից թեւեր են տալիս Բաքվի ռեժիմին: «Իրանը կայսրությունն է եւ կայսրության մեջ ցանկացած ժողովուրդ կարող է հասնել ամենաբարձր կետի: Իսկ Ադրբեջանի Հանրապետությունը մի փոքր իմպերիա է, որը փոքր ժողովուրդներին ոչնչացրել, ձուլել է եւ դրա հիման վրա ստեղծել է ադրբեջանցի ազգի, որը գտնվում է իր ձեւավորման վերջնական փուլում», - լրացրեց իրանագետը:

Հայը Շվեդիայում թուրքական բանկ է բացել



Հոկտեմբեր 20, 2012

Շվեդիայի Վառնեմո քաղաքում հանդիսավոր պայմաններում տեղի է ունեցել Türk bankı բանկի բացումը, որի հիմնադիրն է Կիլիկիայի Մերսին քաղաքում ծնված հայազգի Զադիմ Աբչան:

Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Զադիմ Աբչայի բանկի բացման հանդիսավոր արարողության ժամանակ ելույթներով են հանդես եկել Շվեդիայի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Սախազահ Աննե Լոֆը եւ Շվեդիայում Թուրքիայի դեսպան Չերգուն Զորութուրբը:

Նշենք, որ Զադիմ Աբչան ծնվել է Մերսինում 1951 թվականին, աղքատ հայի ընտանիքում: 19 տարեկանում մեկնել է Շվեդիա, որտեղ հասարակ աշխատողից հասել է մինչեւ հոլդինգի սեփականատեր:

Շվեդիայի թուրքական մշակույթի եւ ուսումնասիրությունների միությունը 2011-ին «Տարվա բարեկամ» մրցանակը հանձնել է Թուրքիայում ծնված հայազգի գործարար Զադիմ Աբչային՝ «Հաջողության հասնելու համար մտածել թուրքի պես» գրքի համար: Գործարարը գրքում պատմում է իր կենսագրության մասին եւ խորհուրդ տալիս, թե Շվեդիայում ինչպես պետք է հաջողության հասնել:

Պուտինը սպառնացել է Երդողանին

Հոկտեմբեր 23, 2012

Թուրքական Aydinlik պարբերականը հրապարակել է տեղեկություն, ըստ որի, հոկտեմբերի 8-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Երդողանի միջեւ տեղի է ունեցել լարված հեռախոսազրույց:



Թուրքական պարբերականը նշում է, թե խոսակցության մի հատվածում Էրդողանն ուղղակի անջատել է հեռախոսը:

Պուտին. Եթե նույնիսկ մեկ զինվոր Սիրիա մտնի, կընկալենք, որ նրանք մտել են Մոսկվա:

Էրդողան. Դա սպառնալիք է, չենք կարող ընդունել:

Պուտին. Ինչպես ուզում եք, այնպես էլ ընդունեք:

Նշվում է, որ հենց այս հատվածում Էրդողանն անջատել է հեռախոսը, սակայն պաղեստինյան աղբյուրները հակառակն են պնդում՝ նշելով, թե Պուտինն է անջատել հեռախոսը:

Հիշեցնենք, որ այս ենթադրյալ հեռախոսագրույցից մեկ օր անց Պուտինը հետաձգեց իր այցը Թուրքիա, իսկ օրեր անց տեղի ունեցավ Մոսկվա-Դամասկոս մարդատար օդանավի հետ կապված դեպքը:

Սիրիահայերին հումանիտար օգնություն տանող օդանավը բարեհաջող վայրէջք է կատարել Հալեպում



Հոկտեմբեր 15, 2012

Սիրիայի հայկական համայնքին հումանիտար օգնություն տանող ինքնաթիռը արդեն վայրէջք է կատարել Սիրիայի օդանավակայանում: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է Հալեպում Հայ

առաքելական եկեղեցու Բերիո թեմի մամուլի բարտուղար Ժիրայր Ռեիսյանը: Նա նշեց, որ ինքնաթիռը այժմ օդանավակայանում է, բայց երեկոյան օդանավակայան տանող ճանապարհը հարմարություններ չունի, այնտեղ հնարավոր չէ գնալ ուշ ժամերին: Ժիրայր Ռեիսյանը նշել, որ ստացած օժանդակությունը օդանավակայանի պատկան մարմինների հսկողության ներքո է եւ առավոտյան «Շտապօգնության» խումբը կգնա եւ կբերի, կբաշխի այն:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետությունից Սիրիայի հայկական համայնքին հումանիտար օգնություն է տրամադրվում: Դեռեւս անցած շաբաթ թուրքական ավիացիոն իշխանությունները AIR Armenia ավիաընկերությանը տեղեկացրել էին, որ եթե ավիաընկերությունը ցանկանում է իր օդանավն անցնի Թուրքիայի օդային տարածքով, պետք է վայրէջք կատարի Թուրքիայի Էրզրումի օդանավակայանում եւ իրականացվի բեռի վերազննում: Ավիաընկերությունը տվել է իր համաձայնությունը եւ ի սկզբանե իր թռիչքային պլանում նախատեսած է եղել այդ օդանավակայանում վայրէջք կատարելը:

Սիրիայում քրդերը 3-րդ բրիգադն են ստեղծել



Հոկտեմբեր 13, 2012

Սիրիական զորքերի հեռանալուց հետո Սիրիայի հյուսիսային քրդաբնակ շրջաններում իշխանության գլուխ անցած քրդական «Ժողովրդավարական միասնություն» կուսակցությունը (PYD) Էֆրին եւ Զամռլու բաղաբններից հետո Կոբանիում (Այն ալ Արաբ) է բրիգադ ստեղծել:

Քրդական ANF-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի հետ սահմանակից Սիրիայի հյուսիսային Կոբանի բաղաբնում հոկտեմբերի 11-ին տեղի է ունեցել «Ժողովրդի պաշտպանության ուժեր» (YPG) զինված միավորման ստեղծմանը նվիրված զինվորական միջոցառում:

Նշենք, որ ավելի վաղ քրդերը զինված միավորներ էին ստեղծել Էֆրին եւ Զամռլու բաղաբններում, որը լուրջ անհանգստություն էր պատճառել թուրքերին:

Հիշեցնենք, որ այս տարվա օգոստոսին Կոբանի բաղաբնում ստեղծվել էր ժողովրդական խորհրդարան, որի կազմում կան նաեւ հայեր:

Երուսաղեմում Հայոց պատրիարքի վերջին օծման ու թաղման կարգ է կատարվել



Երուսաղեմում հոկտեմբերի 22-ին կայացել է Երուսաղեմի հայոց պատրիարք հոգելույս Թորգոմ Արք. Մանուկյանի վերջին օծման ու թաղման կարգը:

Այս մասին «Արմենպրես»-ին տեղեկացրել են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության բաժնից: Արարողությանը ներկա է գտնվել Կիպրոսի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արք. Հերկեյանը: Վեհափառի ցավակցական գիրը արարողության ժամանակ կարդացել է Վարուժան Սրբազանը:

Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի ղեկավար Տեր Վահրամ քահանա Մելիքյանը հայտնեց, որ Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ Երկրորդի հուղարկավորությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցել են Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը եւ Գեղարքունիքի թեմի առաջնորդ Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հոկտեմբերի 12-ին Երուսաղեմում վախճանվել է Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: 93-ամյա պատրիարքը 60 տարի նվիրումով ծառայել է հայ Եկեղեցուն: Նա նաև եղել է «Սիոն» պաշտոնաթերթի խմբագրական կազմի անդամ, նաև Ճեմարանի փոխտեսուչ և տեսուչ: Թորգոմ Պատրիարքը մեծ ավանդ է ունեցել միջազգային Էկումենիկ հարաբերությունների զարգացման գործում: Նա ծառայել է ԱՄՆ-ում Զրիստոսի Եկեղեցիների Ազգային Ժողովի կանձնաժողովում, Նախագահել է «Կրոնն ամերիկյան կյանքում» խորհուրդը: Եղել է նաև «Խղճմտանքի կոչ» հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ:

Իրանական անօդաչուն կարողացել է տեղեկություններ հաղորդել Իսրայելի ռազմական գաղտնի օբյեկտների մասին

29.10.12

Իրանի իշխանությունները հոկտեմբերի 29-ին հայտարարել են իսրայելական գաղտնի օբյեկտների լուսանկարների սրացման մասին, որոնք ստացվել են իրանական անօդաչունների ֆոտոխցիկներից, հաղորդում է lenta.ru-ն՝ հղում կատարելով Reuters-ին:

Իրանի խորհրդարանի պատգամավոր Էսմաիլ Կոբսարիի խոսքով, անօդաչուն Իրանին է փոխանցել մի շարք իսրայելական ռազմաբազաների լուսանկարներ, և միայն դրանից հետո է այն խփվել:

Կոմսարին ավելացրել է, որ տեղեկությունները փոխանցվել են իրական ժամանակի ռեժիմում:



Այն անօդաչուն, որի մասին խոսք է գնում այստեղ, իսրայելական օդուժի կողմից խփվել է հոկտեմբերի սկզբին Իսրայելի անապատային հատվածում, որտեղ տեղաբաշխված են երկրի գաղտնի միջուկային ռազմական օբյեկտները:

Այդ անօդաչուի բաց թողնման պատասխանատվությունը վերծրել էր լիբանանյան «Հեզբոլահ» խմբավորումը, որին աջակցում է Իրանը:

Նշենք, որ Իրանը ակտիվորեն զարգացնում է սեփական անօդաչու սարքերի արտադրությունը: Նախորդ տարի իրանական գիտնականներին այդ հարցում «մեծ աջակցություն ցուցաբերեցին» ամերիկացիները՝ Իրանի տարածքում կորցնելով իրենց նորագույն «անտեսանելի» անօդաչու սարքերից մեկը՝ RQ-170 Sentinel-ը:

Իրանցիները կարողացան գրավել այդ անօդաչուի կառավարումը և իջեցնել այն իրենց օդանավակայաններից մեկում: Դրանից հետո հայտարարվեց, որ Իրանը շուտով նույն կարգի անօդաչուներ կունենա:

Մշակույթ

Լույս ամսագրի խմբագիր դր. Էդիկ Բաղդասարյանի ելույթը Հայ լրագրողների 6-րդ համագումարում, հոկտեմբերի 4-6, 2012 Երևան

ԱՌԱԽՁԻՆ ՀԱՄԱՇԵՆԱՀՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԵՎ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1914թ. օգոստոսի 1-ին պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Ակնհայտ էր, որ այն չէր կարող շրջանցել Պարսկաստանը, մանավանդ որ պանթուրքիզմի գաղափարներով տարված երիտթուրքերը երազում էին ստեղծել «Մեծ Թուրքիա» մի նոր համաշխարհային պետություն, որի սահմանները ծավալվելու էին Ասիայի արեւմտյան մասից ու Աֆրիկայից մինչև Զինաստան:

1914թ. նոյոմբերի 21-ին օսմանյան բանակը Շյուքրի փաշայի եւ գերմանական զեներալ Լիման Ֆոն Սանդերսի հրամանատարությամբ մի քանի վայրերից միաժամանակ (Մոսուլ, Սուուջբուլաղ, Խոյ) ներխուժեցին

Պարսկաստանի տարածքը եւ ռազմական գործունեություններ ծավալեցին ռուսական ջոկատի դեմ: Թուրքական բանակի հետ սերտ համագործակցություն ունեին նաեւ քրդական անկանոն «Համիդիե Գնդերը», որոնք ասպատակ էին սփռում սահմանամերձ վայրերում: Վարչապետ Մոսթֆա-օլ-Մամալեքի կառավարությունը ոչ միայն չձփորձեց դիմադրություն կազմակերպել թուրքական արշավող բանակի դեմ, այլեւ ցուցում տվեց պատժել բոլոր նրանց, ովքեր կդիմադրեին թուրքերին:

Ատրպատականում ռուսական զորքերի թիվը ընդամենը 13 հազար էր: Սակայն նրանց օգնում էին նաեւ հայերից ու ասորիներից կազմակերպված ջոկատները, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկավ գորավար Անդրանիկ Օզանյանի վաշտը: Կամավորական այդ ջոկատները Պարսկաստանի տարածքում կատաղի մարտեր էին մղում թուրքական զորքի դեմ: Համառ մարտերից հետո նոյեմբերի վերջին օսմանյան զորքերին հաջողվեց գրավել Ատրպատականի եւ Քրդստանի արեւմտյան շրջանները : Ուստի վտանգվեց սահմանամերձ տարածքների հայության դրությունը: Բազմաթիվ իրանահայեր հարկադրված էին գաղթել եւ տեղափոխվել ռուսական տիրապետության ավելի խոր շրջաններ: Պարսկաստանի քրդերը եւ մասամբ թուրք «ասկյարները» շարժվելով դեպի հոյ սպառնալիք էին ստեղծել Ջուլֆայի ճակատամարտին, որը եւ խուճապ առաջացրեց իրանահայերի մեջ: Սարիղամիշի անհաջողությունից հետո, ռուսները նահանջեցին Մարաղայից այն գիջելով թուրքերին: Դրանից հետո Թավրիզի ռուսական հյուպատոսը պաշտոնական մի գրությամբ դիմեց Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելի-Թանգյանին եւ եւ վաճառա-կանների գլխավոր՝ Նազարբեկյանին, որպեսզի ժողովրդին եւ վաճառականներին տեղեկացնեն, անհապաղ հեռանալ Պարսկաստանից: Գիտակցելով իրանահայերի գլխին կախված վտանգի մեծությունը, Մելիք-Թանգյանը անմիջապես հեռագիր հղեց պարսից շահին եւ Պարսկաստանում Ամերիկայի դեսպանին, խնդրելով իրենց հովանավորության տակ վերցնել հայերին:

Ռազմական անբարենպաստ իրադրության հետեւանքով Ատրպատա-կանի գորամասի նահանջի ժամանակ, գործող բանակի հետ միասին, գաղթում է Պարսկաստանի քրիստոնյա ազգաբնակչության մի մասը՝ թվով 44,000 մարդ, որից 24,000-ը հայեր էին հետեւյալ վայրերից. Թավրիզից՝ 3,000, հոյից՝ 2000, Սալմաստից՝ 15,000 եւ Ուրմիայից՝ 4000 հոգի: Սնացած 20,000-ը ասորի եւ քրիստոնյա այլ ազգի գաղթականներ էին :

«Արդեն իսկ Ուրմիայի եւ Սալմաստի գաղթականության ծայրը հասել էր հոյ եւ այստեղից էլ 72 կիլոմետր ճամբա կտրելով պիտի հասներ Ջուլֆա» :

Միեւնույն ժամանակ Թեհրանում թուրքական դեսպանն աշխատում էր իրահրել հայկական ջարդերը: Այդ առթիվ ռուս զինվորականներից մեկը հաղորդում է. «Թեհրանի հայ բնակչությունը շրջանում տիրում է իսկական խուճճապ: Հայերը փորձում են կազմակերպել ինքնապաշտպանություն» :

Իրանահայերի գաղթի առաջին իսկ օրերից, թե՛ ռուսական, թե՛ կաթոլիկ, թե՛ բողոքական եւ թե՛ ասորի հոգեւորականներն ու գործիչներն իրենց ժողովուրդներին թողնելով անտերունջ, դժոխային

տանջանքների մեջ, հեռացան Ռուսաստանի խորքերը: Նկատի առնելով այդ իրողությունը, տեղում մնացած Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդ Տ. Ներսես արք. Մելիք-Թանգյանը, առանց ազգի եւ դավանանքի խտրականության, կազմակերպեց բոլոր գաղթականների խնամակալությունը: Նրան օգնության ձեռք մեկնեց Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչ՝ Զ. Շարաֆյանը, Բաքվի Հայոց Գաղթականական Կոմիտեի ներկայացուցիչ Զ. Պապյանը, Թիֆլիսի Պարսկահայ Կոմիտեի ներկայացուցիչ Ա. Հարությունյանը եւ ապա Բաքվի բժիշկ Ա. Ավետիսյանը :

Գաղթականների մեծամասնությունը գաղթի ճանապարհին կանգ առավ Ռեշտում, որտեղ նրանց նպաստելու եւ օգնելու նպատակով կազմվեց գաղթականական կոմիտե: Վիճակագրական տեղեկությունների համաձայն Սալմաստի շրջանի հայերի շարժական գույքի վնասը հասնում էր 6 մլն.-ի ճանապարհին մեռածների ու կորածների թիվը 205-ի, Ուրմիայինը՝ 3 մլն.-ի, մահացածների թիվը՝ 103-ի, իսկ հոյի շրջանի նյութական վնասը, բացի 27 զոհվածներից եւ կորածներից, կազմում էր 100,000 մ.: Ընդհանուր վնասը կազմում էր 7.5 մլն. մ. :

1915թ. հունվարի 2-ին Ջուլֆա հասան իրանահայ գաղթականների առաջին խմբերը, որոնք տեղավորվեցին կայարանում, իջեւանատներում եւ այլուր: Նախիջեւանում ապաստանած հազարավոր իրանահայ գաղթականների բազմության պատճառով, քաղաքը ահավոր վիճակում էր: Գաղթականներին տրվում էր հաց հիմնականում շրջակայքի հայկական գյուղերից, բացի հացից, յուրաքանչյուր մարդի օրական տրվում էր 5 կոպեկ: 16 օր տեւած գաղթից հետո, ցրտի պատճառով շատերը տառապում էին զանազան հիվանդություններով:

Այդ ծանր, բախտորոշ օրերին Պարսկաստանի տարբեր շրջաններից գաղթած եւ Նախիջեւանի ւ Շարուրի գավառներում հանգրվանած գաղթականությունն առաջին հերթին մեծ օգնություն ցույց տվեց շրջանի գյուղացիությունը: Սկսած 1915թ. հունվարի 4-ից գաղթականների բոլոր ծախսերը հոգում էր գավառի տեղական բնակչությունը: Հունվարի 10-ին գաղթականների վերջին շարասյան հետ մահիսն, իր օգնականներով, Նախիջեւան տեղափոխվեց նաեւ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը:

Երեւանի նահանգապետի եւ գաղթականության կովկասյան գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ Ա. Պավլովի առաջարկով կայացած գաղթականական ժողովը, Նախիջեւանի եւ Շարուր-Դարալագյազի եղբայրական օգնության կոմիտեի նախագահ ընտրեց սրբազան Մելիք-Թանգյանին: Ապա մի քանի օրվա ընթացքում բոլոր փախստականներին տեղափոխեցին Նախիջեւանի եւ Շարուր-Դարալագյազի 69 հայաբնակ գյուղերում: Նրանց թիվը 8,500 էր, որոնցից 6,000-ը հայեր: Գաղթականներին տրվում էր ուտելիք, կենցաղային միջոցներ, եւ բժշկական օգնություն :

Ռուսների կողմից Սալմաստի առաջին գրավումից հետո, մեծ թվով իրանահայեր վերադարձան նախկին բնակավայրերը: Արիավիրքի ժամանակ Սալմաստում մնացած եւ սպանված շուրջ 400 քրիստոնյաների դիակների թաղումը կազմակերպելու համար Սալմաստ տեղափոխվեցին նաեւ հոյի փոխ-հյուպատոս Վիդեյնսկին:

1915 թ. ապրիլի վերջերին, ռուսների կողմից Սալմաստի երկրորդ գրավումից անմիջապես հետո, Ներսես արք. Մելիք-Թանգյանը ստեղծված իրավիճակին

ծանոթանալու, ինչպես նաև գաղթականների վերադարձը կազմակերպելու նպատակով, կոմիտեի անդամների հետ միասին, մայիսի 18-ին մեկնեց Խոյ, Սալմաստ եւ Ուրմիա: 1915թ. մայիսին ռուսների կողմից Ուրմիայի գրավումից հետո, առաջնահերթ խնդիր դարձավ քրիստոնյաների վիճակի բարելավումը:

Դրությունը ծանրացավ 1915թ. հուլիսի վերջերին, երբ սկսվեց Վանի նշանավոր գաղթը: Վասպուրականի փախստականների մի մասը, երկու գծով շարժվեց դեպի Սալմաստ ու Խոյ: Շուրջ 6,500 գաղթականներ՝ Վանից, Շատախի, Մոկսի, Կարճկանի եւ Կարկառի շրջաններից, ապաստան գտան Սալմաստի շրջանում. իսկ 2,500 հոգի հանգրվաններից Խոյում :

Բացի հացահատիկներից եւ դրամական օգնությունից, քրիստոնյա գաղթականներին բաժանվեց 30,000 զույգ հագուստեղեն: Հայ գաղթականական կոմիտեի աջակցությամբ փախստականների համար դպրոցներ բացվեցին Գարաջայի, Գեարդապատ, Նախիջեւան-թափա, Ռահվա, Դիկալա եւ Բաբառու գյուղերում: 1916թ. դեկտեմբերին կատարված վիճակագրության համաձայն Ուրմիայի շրջանում կային 28,157 ասորի եւ 986 հայ գաղթականներ : 1916թ. սեպտեմբերին Խոյի շրջանում ապաստանել էին 4,404 գաղթականներ: Վասպուրականի 1916թ. հուլիս-օգոստոսյան գաղթից հետո տեղ հասան եւս 1,500 տարագիրներ, որոնք տեղաբաշխվեցին Խոյի շրջանի գյուղերում: Թավրիզի շրջանի գաղթականական կոմիտեի գործունեությունն ընդգրկում էր Սոուդերբուլաղի, Միանդուաբի եւ Մարաղայի շրջանները: 1916 թվականի սեպտեմբերին ապաստանած 163 ընտանիքներին հիմնականում կենտրոնացրել էին Մարաղայում: Տեղի օգնության կոմիտեն նպաստները տրամադրում էր քարտային համակարգով: Ռեշտի ընդամենը 100 տուն ունեցող հայ բնակչությունը, տեղական ծխական քահանայի նախաձեռնությամբ հրավիրված ժողովում, որոշեց վերոհիշյալ շրջաններից Ռեշտ հասած գաղթականներին ձրի բնակարան եւ նյութական օգնություն տրամադրել: Մի քանի օրվա ընթացքում հանգանակվեց մինչեւ 1,100 թուման :

Ահա այսպիսին էր հայ գաղթականության տեղաբշխումը եւ օգնության կազմակերպումը Պարսկաստանում եւ նրա հարակից տարածքներում: Այն կազմակերպողների գործիմաց եռանդի եւ նվիրվածության, հայ բնակչության ազգանվեր ջանքերի շնորհիվ, հնարավոր եղավ կանխել մարդկային մեծաթիվ կորուստները, պահպանել բազմահազար տարագրվածների կյանքը:

ԹԱՎՐԻԶԻ ՀԱՅՈՒՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԹԲԲԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՕՐԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918) օսմանական բանակները ներխուժեցին Պարսկաստան եւ կողոպուտի եւ ջարդի ենթարկեցին Ատրպատականի շրջաններում Ուրմիայի, Սալմաստի, Խոյի, Մակուի, Ղարաղաղի շրջանները, Ս. Թաղեի վանքը. ապա մուտք գործեցին նաև Թավրիզ, պատանդներ վերցրին հայ բնակչությունից, որին պիտի հետևեր

Թավրիզի հայությունը եւ մյուս քրիստոնյաների կոտորածը:

Պարսկաստանում ներխուժած թուրքական բանակի հրամանատար Խալիլ բեյը 1914 թվականի վերջերին եւ 1915 թվականի սկզբին, երբ պարտություն կրեց հայ կամավորական ջոկատներից (10,000 մարդ) եւ ռուսական բանակից (ռուսական բանակում ծառայում էին ավելի քան 250,000 հայ զինվորներ), անցավ Վան եւ այնտեղ Վանի կուսակալին՝ ճեւտեթին հայտնեց, որ «մաքրել է Ուրմիայի եւ Սալմաստի քրիստոնյաներին », ճեւտեթն էլ պատրաստվել էր «մաքրելու» Վանի եւ Վասպուրականի հայերին: Այդ պայմաններում էր, որ Վանի հայությունը դիմեց ինքնապաշտպանության եւ հաղթական դուրս եկավ :

Թուրքական բանկը երկրորդ անգամ խախտեց Պարսկաստանի չեզոքությունը 1917-թվականին: Այս անգամ Ալի Էհսան փաշայի հրամանատարությամբ, նպատակ ունենալով ներխուժելու Արեւելյան Հայաստան եւ ջնջելու հայությանը՝ լրացնելու համար Արեւմտահայաստանի 1915 թվականի եղեռնը: Թուրքական բանակի Թավրիզի հրամանատարն էր Մուհիթ բեյը, որ աշխատում էր պատերազմին տալ կրոնական բնույթ եւ գրգռել Պարսկաստանի բնիկ մահմեդականներին քրիստոնյաների դեմ, ջարդեր կազմակերպել : Նա կոչեր էր անում եւ թռուցիկներ էր ցրում, գրգռելով ոչ-քրիստոնյա տարրերին:

Հայր Պեռ Ֆրանսեսը, որ Սպանիայի եւ Հոլանդիայի հյուպատոսն էր Ատրպատականում, այդ կողմերի դեմ երկու բողոքագիր-նամակով դիմում է Մուհիթ փաշային, ի պաշտպանություն հայ բնակչության. « Ես խորապես վշտացած եմ, տեսնելով բազմաթիվ գրգռիչ կոչեր քրիստոնյաների դեմ: Ես անակնկալի եմ եկել այն կեցվածքից, որ Ձերդ Գերագանցությունը բռնել է Թավրիզի հայության հանդեպ: ... Արդ, Թավրիզի հայերը որեւէ թշնամական մտադրություն ցույց չեն տվել օսմանյան շահերի դեմ, բայց այն միջոցները, որ դուք եք առել երեկ, ինձ խորհել են տալիս »:

Օգոստոս ամսին լուր է ստացվում, թե թրքական զավթիչ բանակի հրամանատար՝ զորավար Ալի Էհսան փաշան շուտով Թավրիզ պիտի ժամանի: Մի քանի օր հետո Թավրիզի թուրքական բանակի զինվորական հրամանատար Մուհիթ բեյը հյուպատոսին իր մոտ է կանչում եւ նրանից երեւելի հայերից 24 պատանդներ է պահանջում, որոնք պիտի նրան հանձնվեին նույն օրվա երեկոյան: Հյուպատոսը աշխատում է զորավարին հրաժարեցնել: «Բայց, պարոն հրամանատար, ի՞նչու եք 24 պատանդ պահանջում, միթե 3 կամ 4-ը բավական չեն, սա մի բավարար երաշխիք է » : Հյուպատոսի պնդումով թուրք հրամանատարը պատասխանում է.«Թե, լավ, ձեզ հաճույք պատճառելու համար, մենք կը բավարարվենք 10-ով, բայց ոչ պակաս » :

Հյուպատոսը անօգուտ գտնելով առավել պնդումները, հրամանատարին հրաժեշտ է տալիս եւ անմիջապես դիմում է Թավրիզի Հայոց Առաջնորդարան, Ներսես արք. Մելիք-Թանգյանին, բացատրելով հարցի որպիսությունը: Սրբազանը անմիջապես Թեմական ժողով է հրավիրում, եւ հարցը քննելուց հետո վերջապես 10 հոգի կամավորներ թեկնացու են դառնում:

Հյուպատոսը հրամանատարից սպայական խոստում էր ստացել, որպեսզի ոչ մի դեպք չպատահի հայ պատանդներին, նրանցից օգնություն խնդրելով հարցի խաղաղ լուծման ուղղությամբ:

Այդ 10 կամավորներն էին.

- 1- Աղա Չաքարիա Նազարբեկյան (վաճառականապետ, չեզոք)
- 2- Գասպար Յակոբյան (դաշնակցական ղեկավար, ուստիցի)
- 3- Ալեքսան Տեր Վարդանյան (հնչակյան ղեկավար, ուստիցի)
- 4- Հայկ Հովհաննիսյան (սոցիալ-դեմոկրատ)
- 5- Հարություն Օհանյան (սոցիալ-դեմոկրատ, բոլշևիկ, ամենաերիտասարդը պատանդների մեջ)
- 6- Սուրեն Աֆթանդիլյան (անկուսակցական, դրամատան պաշտոնյա)
- 7- Հովսեփ Խան Հովսեփյան (դաշնակցական, լուսավերիչ)
- 8- Պետրոս Հարությունյան (դաշնակցական, դերձակապետ)
- 9- Սաշա Տեր Հակոբյան (դաշնակցական, իրավաբան)
- 10-Թադեոս Աֆթանդիլյան (մեծ առևտրական) :

Հյուպատոս հայր Պ. Ֆրանսենը այսպես է նկարագրել ուրբ գլխավոր հրամանատարի ժամանումը.

«... Ալի էհսան Փաշայի գալը նախատեսված էր հաջորդ օրը՝ օգոստոսի 11-ի կեսօրից հետո ժամը 4-ին: Որոշված ժամին ես մեկնեցի տեսակցության վայրը, քաղաքից դուրս, Ջուլֆայի ճամբի վրա: Այնտեղ մեծ թվով զինվորներ կային... Այնտեղ հասնելով ես տեսա նաև հայկական մի պատվիրակություն, որ բաղկացած էր շատ երեւելիներից եւ փոքր տարիքի աղջիկներից, ճերմակ հագուստով եւ ձեռներին մի-մի ծաղկեփունջ: Որոշված ժամին զորավարի ժամանումը ազդարարվեց եւ մենք նրան տեսանք զորքի առջեւով անցնելիս, ապա նա ուղղվեց տեղական իշխանությունների մոտ, որոնք պատիվներ ընծայեցին նրան: Իմ հերթին, ես էլ մի բարձրաստիճան սպայի կողմից ներկայացվեցի իբրև սպանական եւ հոլլանդական հյուպատոս, ապա իմ շատ հարգալից ողջունից հետո, նա եւս ողջունեց, սեղմեց իմ ձեռքը՝ շնորհակալություն հայտնելով: Միաժամանակ ես ներկայացրի հայ համայնքի ողջույնը, ապա՝ հայերի ներկայացուցիչների գլխավորը բարի ժամանում մաղթեց փաշային, միանգամայն հավաստիացնելով խաղաղասեր Թավրիզի հայ համայնքի զգացումները: Ապա նշան արավ փոքրիկ աղջկան ծաղկեփունջը տալու զորավարին, բայց սա, առանց ուշադրություն դարձնելու, մի խիստ եղանակով պատասխանեց հայ ներկայացուցչի ճառին հետևյալ խոսքերով.

ԱԼԻ ԷՀՍԱՆ ՓԱՇԱՅԻ ՃԱՌԸ

«Շնորհակալ եմ որ եկել եք ինձ ողջունելու, բայց լսեք թե ինչ պիտի ասեմ ձեզ. ամենից առաջ արդարացրեք ձեր գործերը ձեր խոսքերի ճշմարտության հետ: Դուք չեք կարող տեսնել թե որքան վատություններ են արել Ուրմիայի, Սալմաստի եւ Խոյի հայերը մահմեդականներին: Դեռեւս մոտ անցյալում Անդրանիկը, ձեր զորավարը, իր զորքով եկավ մեր վրա հարձակվելու. Իրենց մահանջի ժամանակ, փախչողները կտորրեցին իրենց ճամբի վրա գտնվող մահմեդական գյուղերը: Նրանք նրանց սպանեցին առանց սեռի, տարիքի կամ վիճակի խտրության:....

Մենք էլ սպանեցինք, իբրև փոխհատուցում, Խոյի հայերին, եւ ես հրաման արձակեցի կտորրել Սակուի հայերին: Ուրեմն եթե դուք ուզում եք լավ վերաբերմունքի արժանանալ, գործնականի վերածեք այդ խոստումները, որ տվիք, ապա թե ոչ ես ոչ մի բանի պատասժանատու չեմ»:

Հայր Ֆրանսենը , ապա շարունակում է.

Այս ճառը շատ ծանր տպավորություն եւ սարսափելի մտավախություն պատճառեց ունկնդիրներին, եւ մասնավորապես հայերին, ինձ վրա էլ ոչ պակաս, քան որ այդ պահին պատանդները բանտում էին գտնվում: Այդ գիշեր ես չկարողացա աչք զոցել: Հենց հաջորդ առավոտյան ես նորից գնացի պատանդներին տեսնելու, բայց նրանց տեսնելով առույգ եւ լավ վիճակում, եւ նրանց վստահեցնելով, որ նախորդ օրը պատասխանատու անձինք վերանորոգել էին հավաստիքները, իմ վստահությունն էլ ավելացավ: Հաջորդ օրերի ընթացքում կացությունը մնաց հանդարտ եւ երկու օր հետո, Փաշայի մեկնումից հետո, պատանդներն ազատ արձակվեցին...» :

Այն մռայլ, մահասփյուռ օրերին, իրապես քաջություն եւ անձնագոհություն էր պահանջվում կամովին պատանդ դրվել դահիճների ձեռքում, ի սեր հայ ժողովրդի փրկության, մի սխրագործություն, որին մասնակցեցին թավրիզի հայ համայնքի բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչները՝ հուզիչ անձնավիրությամբ:

Եւ չպիտի փրկվեին պատանդներն ու Թավրիզի հայությունը, եթե եվրոպական եւ Պաղեստինի ճակատի պարտությունների լուրը չհասներ Ալի էհսան Փաշային, նաև հետևյալ միջադեպը, որոնք պատճառ դարձան որպեսզի թուրքական բանակը արագ մահանջի դիմի:

Իրանահայությունը՝ եւս Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած Հայոց Մեծ եղեռնի օրերին տվեց հազարավոր նահատակներ: Անգլիայի հռչակավոր պատմաբան Աննուլդ Ջ. Թոյնթին, հայոց ջարդերին նվիրված իր հանրածանոթ՝ «Մի աղզի սպանությունը» («Armenian atrocities, Murder of a Nation») գրքում հիշատակել է հետևյալ տեղերը.

«Հաֆթվանում եւ Սալմաստում առանց գլուխների 850 դիակ գտնվեց՝ միայն հորերից եւ ջրամբարներից հանված: Ինչո՞ւ: Որովհետև հրամայող պաշտոնյան մի զին էր դրել քրիստոնյա ամեն մի գլխի համար: Միայն Հաֆթվանից 500-ից ավելի կանայք եւ աղջիկներ են ուղարկվել Սուլջբուլաղի քուրդերին: Եթե կարող եք, երեւակայցեք այս դժբախտ արարածների բախտը: Դիլիմանի քրիստոնյաներից մի մեծ խումբ բանտ մետվեց եւ պարտավորվեց իսլամանալ: Տղամարդկանց թլպատեցին: Ուրմիայի շրջակայքից ամենահարուստ գյուղը՝ Գյուլփարջան (گلپارچین) հիմնահատակ կործանվեց, տղամարդիկ սպանվեցին, գեղեցկադեմ կանայք եւ աղջիկները առեւանգվեցին,նույնը պատահեց Բաբառուին (بابارو): Հարյուրավոր կանայք խորունկ գետը նետվեցին, երբ տեսան, որ իրենց քույրերից շատերը ավազակախմբերի կողմից բռնաբարվում էին օրը ցերեկով, ճամբի մեջտեղը: Նույնը եղավ նաև Սուլդուզի շրջանի Միանդաբում:

Այս խժժությունները ահռելի են թվում օտարներին, բայց թուրքերի համար բոլորովին թեթև էին նկատվում» :

Թոյնքին, ապա շարունակում է.

«Ատացած թարմ լուրերը վկայում են, որ վերջին հինգ ամիսների ընթացքում 4,000 ասորի, 100 հայ, միսիոներական կենտրոնում իրենց կյանքն են ձեռքից տվել. բոլոր գյուղերը բացի երկու-երեքից, թուրքերի ձեռքով թալանվել են հրդեհվել են, 20,000 հայ Ուրմախում են շրջակա գյուղերում ջարդի են ենթարկվել: Քաղաքի շատ եկեղեցիներ են տներ ավերվել են այրվել են...»:

Ինչպես արդեն անդրադարձանք, թուրքական բանակը ջարդել էր Արևմտյան Ատրպատականի հայերին Ուրմախի, Սալմաստի, Խոյի, Մակուի, Ս. Թաղեսու Առաքյալի վանքի եւ Ղարադաղի Դգմար գավառի հինգ հայկական գյուղերի բնակիչներին: Ավելի քան 10,000 հայեր ջարդի զոհ դարձան: Թավրիզ ժամանելով՝ Ալի Էհսան փաշան իր ճառի մեջ հայտարարեց դա եւ ապա 10 հոգի թավրիզեցի երեւելի հայեր պատանդ էին վերցրել, հայերի ապստամբությունը կանխելու պատրվակով: Սակայն նա նպատակ ուներ ինչպես Ատրպատականի հիշված բնակավայրերի, այնպես էլ Թավրիզին ջարդի ենթարկել: 1918 թ. հուլիսի վերջը եւ օգոստոսի առաջին շաբաթն էր, Թավրիզի հայությունը կենաց եւ մահու տագնապի մեջ էր, 10 պատանդներ կալանքի տակ էին:

Հայտնի է, որ թրքական բանակի ձախ եւ կենտրոնական թեւերը պարտություն էին կրել Սարդարապատի (1918թ. մայիսի 22-26), Բաշ Ապարանի (1918թ. մայիսի 23-29), եւ Ղարաբիլիսայի (1918թ. մայիսի 25-28) ճակատամարտերում եւ 1918թ. հունիսի 4-ին Բաթունի պայմանագրով Թուրքիայի պատվիրակությունը ճանաչել էր Հայաստանի անկախությունը, սակայն զավթում է Հայաստանի տարածքի մեծ մասը, քանզի Ալի Էհսան փաշան անտեսել էր այդ դաշինքը եւ հունիսի, հուլիս ամիսներին ջարդեր էր կատարել Ատրպատականի հայերի նկատմամբ:

Ալի Էհսան փաշան մասոնական էր: Տասնամյակներից ի վեր Թավրիզ էին հաստատվել արեւմտահայ եղբայրներ՝ Գորոյանները: Նազար Գորոյանը հեղինակն է «Պարսկաստանի հայերը» արժեքավոր աշխատության:

Նրա եղբայրը՝ Տիգրան խան Գորոյանը հնախուզ էր, հնություններ գտնող եւ վաճառող. զբաղվում էր նաեւ ազգային գործերով եւ մտերիմ էր Ատրպատականի Հայոց Թեմակալ Առաջնորդ Ներսես արք. Մելիք Թանգյանի հետ:

Երբ Ալի Էհսան (կամ Էհսան) փաշան Թավրիզ է գալիս, Տիգրան խան Գորոյանը հայության կողմից հարաբերության մեջ է մտնում փաշայի հետ եւ ձգձգում է Թավրիզի հայության ջարդի խնդիրը:

Այդ օրերին թուրքական բանակը մեծ պարտություն է կրում Պաղեստինի ճակատում, գերմանացիներն էլ՝ արեւմտյան ճակատում, ուստի Ալի Էհսան փաշան ստիպված է լինում արագ նահանջելու, առանց հասնելու իր նպատակին՝ Թավրիզի հայության ջարդին:

Ալի Էհսան փաշայի մեկնումից կարճ ժամանակ հետո Տիգրան խան Գորոյանը հարձակման է ենթարկվում իր բնակարանում....

Նրան հարվածել էին քարերով, մարմինը ջարդելով: Նա խնդում է իր ընկերոջը՝ Ստեփան խան Եղիազարյանին որպեսզի նա վերցնի եւ պահի նրա մասոնական ժապավենը եւ շքանշանները:

Հետագայում պարզ է դառնում, որ Տիգրան խանը մասոնական էր եւ ավելի բարձր աստճանն ուներ քան Ալի Էհսան փաշան: Տիգրան խանը ձգձգել էր Թավրիզի հայության ջարդի խնդիրը: Ալի Էհսան փաշան ստիպված էր ենթարկվել իր վերադասին, եւ ապա երբ ստիպված է եղել նահանջել, պատվիրել էր այլ մասոնականների, որ ահաբեկեն Տիգրան խանին:

Խնդիրը պարզ է: Երբ Թալեսաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, որ մասոնական էին եւ չխնայեցին իրենց մասոնական հայ ընկեր Գրիգոր Ջոհրաբին, Ալի Էհսան փաշան էլ չպիտի խնայեր իր մասոնական ընկեր՝ Տիգրան խան Գորոյանին :

Սոհեթ

Մեր Անցած Ճամբան

Թ. Ղարախանյան Սիրակցի

Արեւելքից երեւում էր մի օտար հայաթափ գյուղ «Մամուռան»-ը որտեղ բլուրները միանում եւ բարձրանում էին մինչեւ ժայռոտ սարերի փեշերը գրկելով ոլորապատյոտ քարաքրոտ հին կարավանների ճանապարհը, որ արդեն մեքենաներ էին անցնում դեպի մեծ քաղաքներ, իֆչպես Նոր Ջուղայ եւ Իսֆահան: Այդ փաստալի Մամուռան հայրենանյաց գյուղն էր որ 1946 ներգաղթի ժամանակվանից հայաթափ էր եղել եւ այնտեղում դրացի մեծ Գյանդուման գյուղից եկած պարսիկ գյուղացիներով էր լցված: Մամուռանը իր վարդագույն աղյուսներից կառուցված չորս պարիսպներով բերդաման գյուղ էր:

Նույն գյուղի դրսում էի աղյուսից կառուցված նախքան 1946 թվականը Չարմահալ միության ջանքերով կառույցված հիվանդանոցն էր որ արդեն պիտի վերածվեր Ուսման Ջօրքի գյուղական դպրոցի. Մամուռան գյուղից դեպի արեւելք էլի գետը անցնելով գտնվում էր Լիվասիան հայրենադարձ գյուղը, որտեղ արդեն բնակվում էին տեղի պարսիկ գյուղացիները: Այս գյուղում շատ մոտիկ լինելով մեծաթիվ պարսիկ գյուղ Գանդումանին, պահել էր իր վեց դասարանյա դպրոցը եւ արդեն կորցրել էր իր գյուղական տեսքը, որովհետեւ միացել էր պարսկական մեծ գյուղին Գանդումանին: Այնտեղից մի քիչ արեւելք գտնվում էր 1946-ի հայրենադարձ մյուս քույր գյուղերը՝ Վերի Քոնարք եւ ցածի Քոնարք: Այս գյուղերը հարուստ էին մրգի ծառներով եւ լայնատարած մուք սրճագույն հողագործական դաշտերով: Այստեղից էլի դեպի արեւելք, ոչ շատ հեռու հայրենադարձ գյուղերի շարքի վերջին գյուղը Մուչիզան հայաթափ գյուղն էր, որ իֆչպես բացված վզնոցի վերջին մարգարիտն էր: Եւ Մուչիզան գյուղով Չարմահալի գյուղացի հայության շարանը վերջանում էր եւ սկսվում էր Պարսկաստանի Չարմահալ գավառի ԲԱԽՏԱՐԻ ԶԱԳ-ՌՈՍ լեռնաշղթան:

Երթեւեկության միջոցը դեպի մեծ գյուղեր կամ գյուղաքաղաք փոքրիկ բեռնատար մեքենաներ էին (pick-up) որ թե բեռ էին տանում թե հաճախորդ, բայց գյուղից գյուղ իմ հեծանիվից էի օգտվում, թեպետ որոշ ժամանակ էլ ոչխարատեր հարգելի Ղուլամ Ռեզա անունով անձն էր որ միայն գյուղի ձիատեր մարդն էր եւ ինձ ստիպում էր իր ձիուց օգտվել:

Ես զինվորագրվել էի ծառայելու Ադրուլաղ գյուղում, որտեղ կառուարության հրամանով եւ գյուղապետի որոշումով, գյուղի հին եւ կանգուն եկեղեցուն կից մի գյուղացու բակի մէջ մեծ սենյակ էր հասկացված իմ համար եւ տանուտերը պայմանավորվել էր նոր զինվորական-ուսուցչին այդ տեղը հասկացնել մինչև այդ տարվա աշնան վերջը, երբ պիտի ամուսնացնէր իր անդրանիկ որդուն: Եւ այդպես էլ եղավ:

Այդ մեկ սենյականոց տնում վարագույրով կիսած, կեսը զինվոր-ուսուցչի քնասենեակն էր, մյուս կեսն էլ տասվեց հոգանոց աշակերտների դասարան որի անունները ստացա գյուղապետից: Առաջին օրը տասներեք տղա աշակերտ դասարան եկան, բայց երեք աղջիկների անուններից ոչ մեկը ներկա չէին:

Գյուղապետը բացատրեց որ ծնողները ասում են իրենց աղջիկները տնային գործով են զբաղված եւ հավանաբար դասարան չեն գալու: Սկսվեց դասավանդությունը եւ դաստիարակչությունները իր յուրահատուկ մեթոդներով իֆչպես սովորացրել էին մեզ, օրերը փոքրիկներին եւ երեկնապահիկները այցելություններ գյուղի տարածքներում եւ գյուղի նշանակված ամբողջ ուղեկցությամբ այցելում որոշ մարդկանց բակերը մտնելով առողջապահական խորհուրդներ տալիս, որ իմ ուղեկիցը իրենց բարբառով կրկնում էր առաջարկներս: Նույնիսկ գյուղապետի հետ գյուղի բաղնիս այցելեցինք, որտեղ նկատելով մամռոտ պատերը եւ լողանալու ջրի մակերեսի վրայի աղբը նկատելով առաջարկեցի մաքրաբանել մինչև երկու շաբաթ անց, որ նորեն պիտի վավերացնէի մաքրաբանությունը եւ հենց այդպես էլ կատարվեց: Գյուղապետը ինձ հիշեցրեց, որ այս բաղնիսը կառուցված է եղել հայության ձեռքով եւ հայերը լողավազանի մէջ չեն մտնում, բայց երբ հայերը գնացել են նոր ե կնրը սկսել են բաղնիսից օգտվել եւ “Հալալացնելու աղօթք են կարդացրել եւ Հալացրել են” եւ հետո մի երկու պատ են շտերել եւ ավագանն փոքր լայնացրել են, թե ոչ հիմնականն բաղնիսը հայերից է մնացել: Նմանապես առողջապահական նկատումների համար ամեն ուրեք երեկնապահին, գյուղի տները այցելություններ էի կատարում եւ նույն ժամանակ առիթից օգտվելով, ուղեկցիս խնդրում է արձանագրել այն գյուղացիների անունները որ ցանկություն ունեին նոր դպրոցի շինարարության որեւէ ներդրում անել՝ նշելով, որ ամեն մեկ օր աշխատելու համար երկու կիլո պլուր կատանան:



Վահակ Բաղդասարյան

**Թամար Փանոսյան
Շայերեն-պարսկերեն առածանի**

زبانزدهای ارمنی-فارسی

تالیف تامار پانوسیان

61- Աղբյուրը պիտի իրենից ջուր ունենա:

چشمه آن است که از خود بجوشد.



62- Աշխարհը ծով, մեզ համար սով:

بخت که برگردد، اسب در طوبله خر گردد.

63- Անօրություն- անամոթություն:

آدم گرسنه (دین و ایمان ندارد).

64- Չեղքս բան, ոտքս գերեզման:

یک پایش لب گور است.

65- Մարդը սխալակամե, սխալվելը մարդկային:

انسان جایز الخطاست..



Հովհաննես Թումանյան

Վերջացա~վ...

Կեանքըս մաշվեց, վերջացա~վ.

Ինչ հույս արի՝ փուչ էլավ,

Ինչ խընդություն՝ վերջը ցա~վ:

1890

Ա՛նց կացա~ն...

Օրերս թըռան, ա՛նց կացա~ն.

Ախ ու վախով, դարդերով

Սիրտըս կերա~ն, ա՛նց կացա~ն:

همکاری ایران و ارمنستان در بخش کشاورزی

توسعه می یابد



تبریز- رییس سازمان جهادکشاورزی آذربایجان شرقی گفت: با امضای قرارداد خرید دستگاه‌های کنترل خسارات تگرگ بین این استان و استان آرمویر، همکاری ایران و ارمنستان در بخش کشاورزی توسعه می یابد.

مسعود محمدیان روز دوشنبه در دیدار با پروفیسور آرام وارطانیان رییس مرکز نوآوری بارو از استان آرمویر ارمنستان و هیئت همراه با اشاره به استفاده از دستگاه های ضد تگرگ در استان آذربایجان غربی، افزود: این دستگاه ها نتیجه مطلوبی در جلوگیری از خسارات تگرگ در مزارع دارند.

وی با اشاره به اینکه سالانه میلیاردها ریال بر اثر بارش تگرگ به باغات و مزارع استان خسارت وارد می شود، اظهارکرد: در صورت نصب این سامانه و افزایش سطح زیر پوشش این سامانه ها میزان خسارات ناشی از بارش تگرگ به حداقل خواهد رسید.

محمدیان با بیان اینکه ارمنستان بازار مناسبی برای محصولات کشاورزی آذربایجان شرقی است افزود: ظرفیت های مشترک زیادی برای همکاری دو طرف وجود دارد.

وی تبادل هیئت های کارشناسی در حوزه های مختلف کشاورزی و منابع طبیعی و همچنین بهره گیری از چراگاه ها و مراتع ارمنستان را از جمله موارد مورد بررسی در راستای توسعه همکاری ها عنوان کرد و گفت: خرید دستگاه های باران زا و مولد باران از ارمنستان هم در دستور کار است.

رییس مرکز نوآوری بارو از استان آرمویر ارمنستان هم گفت: با استفاده از فناوری های نو از وارد آمدن خسارت تگرگ به باغات و مزارع جلوگیری می شود.

پروفیسور آرام وارطانیان (Aram Vardanyan) با بیان اینکه دستگاه های ضد تگرگ تولید شده در ارمنستان قادر هستند خطرناک ترین ابرهای تگرگ را پراکنده کنند افزود: این دستگاه ها می توانند ابرها را در شعاعی حدود ۵۰۰ متر تحت تاثیر قرار دهند.

وی گفت: هر کدام از این دستگاه ها قادر است بیش از یکصد هکتار از اراضی اطراف خود را زیر پوشش قرار دهد.

وی با اشاره به اینکه این دستگاه ها با استفاده از گاز بوتان و پروپان کار می کنند، ادامه داد: این سیستم ها ۱۲ کیلومتر برد دارند و قادر هستند از طریق شلیک امواج صوتی به داخل توده ابرهای تگرگ زا، از بارش تگرگ جلوگیری و آن را تبدیل به باران کنند.

پروفیسور وارطانیان با بیان اینکه این دستگاه ها به صورت کنترل از راه دور کار می کنند و حتی می توان با استفاده از تلفن همراه و ارسال پیام کوتاه آنها را فعال کرد، افزود: این سیستم ها قادرند ابرهای تگرگ را بصورت خودکار شناسایی کرده و با تولید امواج ضربه ای کافی برای تأثیر بر روی ابرها در ارتفاع ۱۰ کیلومتر، با هدف جلوگیری از بارش تگرگ و همچنین به عنوان تحریک بارش باران در بسیاری از موارد عمل کنند. وی خاطر نشان کرد: امواج تولید شده توسط این دستگاه ها برای محیط زیست از جمله پرندگان بی خطر است.

کارشناس روسی: غرب در بحران سوریه گرفتار شده است



تهران- 'لئونید ایواشف' رییس آکادمی مطالعات ژئوپلیتیک روسیه گفت: غرب در برخورد با بحران سوریه با یک تنگنای سیاسی روبه رو شده است. به گزارش ایرنا، وی در گفت و گو با شبکه تلویزیونی 'روسیا الیوم' مداخله نظامی در سوریه را ضعیف دانست و اظهار داشت: احتمال مداخله نظامی در سوریه از ۳۰ درصد تجاوز نمی کند.

این کارشناس و تحلیلگر سیاسی روس در پاسخ به پرسشی در باره حمله احتمالی ترکیه و یا 'ناتو' به سوریه و پیامدهای آن گفت: با اینکه ارتش ترکیه اخیرا مجوزی را از پارلمان به منظور آمادگی برای آنچه عملیات محدود مرزی توصیف شده دریافت کرده است، ولی چنین عملیاتی در تضاد با قوانین بین المللی می باشد و نوعی تجاوز به شمار می رود.

وی در باره پیامد چنین حمله ای نیز گفت: ترکیه در این راستا با مشکل ایجاد حلقه ای از کشورهای مخالف خود یعنی ایران، روسیه، ارمنستان، سوریه و عراق روبه رو و این در حالی است که ترکیه از سوی این کشورها احاطه شده است. وی شکل گیری هسته معارضین سوری در خاک ترکیه تحت نظارت و رهبری معاون وزیر امور خارجه آمریکا و حضور گروه های مزدور و ایجاد اردوگاه های آنها در ترکیه را در راستای توطئه برای سرنگونی نظام سوریه و روی کار آوردن گروه های هوادار غرب و آمریکا دانست.

این کارشناس روس در عین حال خاطر نشان کرد که کشورهای مخالف سوریه برای رسیدن به این هدف باید چهار مرحله را طی کنند.

وی خاطر نشان کرد که آنها از این چهار مرحله تاکنون سه مرحله را پیموده اند و به بیان دیگر مرحله اول یعنی ایجاد ارکان سیاسی و تجهیز مخالفان سوری و کشاندن آنان به خیابان ها، مرحله دوم یعنی خونریزی در جریان اعتراضات مسالمت آمیز و کشتن مردم و متهم ساختن نظام حاکم و مرحله سوم یعنی آغاز رویارویی های مسلحانه و عملیات تروریستی را تحقق یافته است.

ایواشف اظهار داشت: ولی غرب در اجرای مرحله چهارم این طرح یعنی مرحله سرنگونی نظام در سوریه نظیر آنچه در یوگسلاوی، عراق و لیبی شاهد بودیم، با شکست مواجه شده است.

وی افزود: این یک پیروزی برای ملت و دولت سوریه به شمار می رود و با کمک روسیه، چین، ایران و برخی دیگر کشورها حاصل شده است.

وی گفت: ما در حال حاضر شاهد این هستیم که غرب در بحران سوریه در یک تنگنایی شدید گرفتار شده است که برنده و بازنده ای ندارد.

وی افزود: در چنین شرایطی روسیه و دولتمردان سوریه باید پیشنهادهایی را برای برون رفت از بحران موجود ارائه کنند.

این کارشناس روس اظهار داشت: مهمترین مسئله در این زمینه این است که ملت سوریه همچنان استقلال و حاکمیت ملی خود را حفظ کرده است.

اعلامیه کمیته انقلاب آذربایجان درباره بخش جدایی‌ناپذیر بودن قراباغ کوهستانی، زانگزور و نخجوان از جمهوری شوروی سوسیالیستی ارمنستان ۳۰ نوامبر ۱۹۲۰

به همه

از طرف جمهوری شوروی سوسیالیستی آذربایجان درباره تصمیمگیری کمیته انقلاب مورخ ۳۰ نوامبر به اطلاع خلق ارمن برسانیده که:

با کسب اطلاع از اعلام جمهوری شوروی سوسیالیستی در ارمنستان از سوی دهقانان شورشی، دولت کارگری- دهقانی آذربایجان بخاطر پیروزی خلق برادر درود می‌فرستد. از امروز مرزهای قبلی ارمنستان و آذربایجان لغو می‌شوند. قراباغ کوهستانی، زانگزور و نخجوان به عنوان بخش جدایی‌ناپذیر جمهوری سوسیالیستی ارمنستان به رسمیت شناخته می‌شوند.

پاینده باد برادری و اتحاد کارگران و دهقانان ارمنستان و آذربایجان شوروی.

رئیس کمیته انقلاب آذربایجان- ن. نریمانف

کمیسر خلق امور خارجه، حسینف

(روزنامه "کمونیست" ایروان، ۷ دسامبر ۱۹۲۰)

متن فرمان کمیته انقلاب ارمنستان در باره الحاق مجدد قراباغ کوهستانی به ارمنستان

۱۲ ژوئن ۱۹۲۱

بر پایه اعلامیه کمیته انقلاب جمهوری شوروی سوسیالیستی آذربایجان و توافق بدست آمده میان دولتهای جماهیر شوروی سوسیالیستی ارمنستان و آذربایجان، بدینوسیله اعلام می‌گردد که قراباغ کوهستانی از هم اکنون بخش جدائی‌ناپذیر جمهوری شوروی سوسیالیستی ارمنستان را تشکیل می‌دهد.

رئیس شورای کمیسرهای خلق جمهوری شوروی

سوسیالیستی ارمنستان آ. میاسنیکیان (آلکساندر مارتونی)

منشی، م. قارابگیان

(روزنامه "خوره‌دایین هایاستان" (ارمنستان شوروی)، ایروان ۱۹ ژوئن ۱۹۲۱)

منبع: تاریخ آرتساخ (قره باغ) نوشته ادیک باغداساریان - تهران ۱۳۸۰

در گذرگاه تاریخ

منبع: مجموعه اسناد تاریخی نژادکشی ارمنیان در امپراتوری عثمانی - ایروان ۱۹۹۱

گردآوری و ویرایش: پرفسور آکادمیسین م. گ. نرسیسیان

ترجمه: ادیک باغداساریان (ا. گ. مانیک)

بخشی از نامه یک سیاح اروپایی در باره اوضاع ارمنیان در کیلیکیه

جلسه ۵ مارس ۱۹۰۶

دستگیری ارمنیان کماکان ادامه دارد. اخیراً افرادی را به اینجا آورده اند که در زیتون، ماراش، آدانا و هاجن دستگیر شده اند.

اوضاع ارمنیان بویژه اهالی زیتون اسفناک است. فرمانده نظامی زیتون به تازگی فوت کرده است. باعث و بانی دستگیری ها او بود...

ناظم پاشا استاندار جدید حلب، یک جلاذ به معنی واقعی است، هم او است که دستور دستگیری متهمان سیاسی و انتقال آنها به جلب را می دهد تا خود او شخصا آنان را محاکمه کند...

"Pro Armenia", 5 may 1906, No 133 p. 893



گزارش کنسول روسیه در ارزروم به زینویف سفیر این کشور در استامبول در ۲۱ ژوئیه ۱۹۰۶

۲۱ ژوئیه ۱۹۰۶

اوایل ژوئیه گروهان نظامی ترکیه در قره کلیسا تعداد ۱۱ خانواده ارمنی را که از سنجک موش گریخته بودند دستگیر کردند. اینان قصد عبور به مرزهای روسیه را داشتند. ۱۶ تن از مردان دستگیر شده بطور وحشیانه توسط سربازان ترک سلاخی شدند اما زنان و کودکان به زندان شهر حسن قلعه ارسال شدند.

هیچگونه شکی نیست که والی ارزروم دستور بازرسی و بازجویی نخواهد داد و هیچ اقدامی برای مجازات سربازان خاطی و قاتل صورت نخواهد گرفت.

کشتارها و خودکامگی های جدیدی از سوی مقامات دولتی ترک انتظار می رود ...

اسکریابین



ماهنامه ارمنی - فارسی زبان

لوپس

صاحب امتیاز، مدیر مسئول و سردبیر

ادیک باغداساریان

نشانی نشریه: تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

چاپ احسان - تهران خیابان انقلاب شماره ۱۱۴۸ کدپستی ۶۳۵۶۱-۱۳۱۵۷ تلفن ۶۶۴۹۵۷۶۱

۲۰ صفحه تکشماره ۵۰۰ تومان

اشتراک مجله: تکشماره ۵۰۰ تومان. ایران یک سال ۶۰۰۰ تومان خارج ۵۰ دلار

شماره حساب ۱۴۰۶۸۶۴۹۲ بانک تجارت شعبه مجیدیه سه راه آرامنه

- ♦ مقالات و دیدگاه های مندرج در ماهنامه «لوپس» لزوماً بیانگر موضع مدیر مسئول و هیئت سردبیری نیست.
- ♦ مقالات، عکس ها و مطالب رسیده باز گردانده نمی شود.
- ♦ نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.
- ♦ استفاده از مطالب «ماهنامه لوپس» با ذکر ماخذ آزاد است.

Աղթամար, խաչքար, 1434, (նկ. 2000 թ. Ս. Կարապետյան)
Akhtamar, khatchkar, 1434 (photo 2000, S. Karapetian)
Akhtamar, Khatchkar, 1434 (photo 2000, S. Karapetian)



Աղթամար, խաչքար, 1434, (նկ. 1913 թ. Բահման)
Akhtamar, khatchkar, 1434 (photo 1913, Bahman)
Akhtamar, Khatchkar, 1434 (photo 1913, Bahman)